



«ՖԱՅՐԲԸՐԴ ԷՅԱՅ» ՓԲԸ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՔԱՂԱՔ ՀՐԱԶԴԱՆ 20 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ՝ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ
ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ
ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇՄԱԳ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ըսամշակված

«ՖԱՅՐԲԸՐԴ ԷՅԱՅ» ՓԲԸ Գործադիր մարմնի ղեկավար՝
Ալեքսանդր Եսայան

Բովանդակություն

Էջ

1. Ընդհանուր տեղեկատվություն	5
2. Հավելվածներ.....	5
3. Գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը.....	6
4. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ	9
5. Նախաձեռնողի անվանումը, գործունեության գտնվելու վայրը, իրականացման նպատակը	10
6. Գնահատման հաշվետվության մշակման հիմքերը.....	10
7. Նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների բնութագիրը.....	10
7.1 Գործունեության իրականացման ենթակա տարածք.....	10
7.2. Շրջակա միջավայրի բնութագրերը	16
7.2.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը.....	16
7.2.2. Սելսմիկա և երկրաբանություն	17
7.2.3. Կլիմա և օդային ավազան.....	18
7.2.4. Հողային ռեսուրսներ.....	24
7.2.5. Ջրային ռեսուրսներ.....	26
7.2.6. Կենսաբազմազություն.....	28
7.2.7. Բնության հատուկ պահպանվող տարածքներ.....	32
7.2.8. Պատմության և մշակութային հուշարձաններ.....	33
7.2.9. Բնության հուշարձաններ.....	43
7.2.10. Սոցիալ-տնտեսական.....	45
8. Նախատեսվող գործունեության բնութագիրը շինարարության շահագործման, փակման և հետփակման փուլերում(արտադրական հզորություններ, օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ).....	49
8.1. Շինարարության փուլ.....	49
8.2 Շինարարության իրականացման ժամանակացույցը	55
8.3 Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.....	57
Ջուր.....	57
8.3.2 Նյութեր.....	58

8.4.Շահագործման փուլ.	59
8.4.1 Նոր կառուցվող շենքի կառուցման տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ են.....	59
9.Փակման և հետփակման փուլեր.	65
10. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, ռիսկերը	66
(շինարարության և շահագործման, փակման փուլ)	66
10.1 Օդային ավազան.	66
10.2 Հողային ռեսուրսներ.....	66
10.3 Ջրային ռեսուրսներ.	67
10.4 Կենսաբազմազանություն.	68
10.5 Թափոններ.	68
10.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.....	70
10.7 Աղմուկ և թրթռում.....	70
10.8 Արտակարգ իրավիճակներ.....	71
10.9 Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը. ..	72
10.10 Էներգախնայողության և Էներգաարդյունավետության պահպանման.....	73
10.11 Լանդշաֆտ. Կառուցապատումն իրականացվելու է կառուցապատված տարածքում:	73
10.12 Բարեկարգում և Կանաչապատում.....	73
11. Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումները	74
11.1 Օդային ավազան.	74
11.2 Հողային ռեսուրսներ.....	75
11.3 Ջրային ռեսուրսներ.	76
11.4 Կենսաբազմազանություն.	77
11.5 Թափոններ.	78
11.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.....	79
11.7 Աղմուկ և թրթռում.....	79
11.8 Արտակարգ իրավիճակներ.....	80
11.9 Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը. ..	81
Սոցիալական գործոններ.....	82
11.10 Լանդշաֆտ.	83
11.12 Բարեկարգում և Կանաչապատում.....	83

12. Նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման ծրագիրը.....	83
(Մոնիթորինգ).....	83
13. Բողոքների ընթացակարգ.....	84
14. Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան.....	85
Պատմամշակութային հուշարձաններ.....	94
Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն	98
15. Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ.....	103
16. Հանրային քննարկումներ	110
Գրականություն	111

1. Ընդհանուր տեղեկատվություն

Հաշվետվություն	Կոտայքի մարզի Հրազդան համայնքի քաղաք Հրազդան 20 հասցեում հասարակական նշանակության շինության՝ Արհեստական Բանականության տվյալների կենտրոնի կառուցում:
Նախաձեռնող	«ՖԱՅՐԲԸՐԴ ԷՅԱՅ» ՓԲԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն	ք. Երևան, Ազատության պող./24/1 Արաբկիր 0014:
Ձեռնարկողի փաստացի գործունեության տարածք	Կոտայքի մարզի Հրազդան համայնքի, քաղաք Հրազդան 20 հասցեում:
Ձեռնարկողի հեռախոս, էլեկտրոնային փոստ	alex@firebird.ai
Աշխատանքային նախագծի մշակող	Adag Group
Գնահատման հաշվետվության նախագծող	«Նովալ» ՍՊԸ
Հաշվետվության մշակող ընկերության հասցե, հեռախոս, էլեկտրոնային փոստ	Ք. Երևան, Իսահակյան 18 (093)39-77-60 noval.llc.noval@gmail.com

2. Հավելվածներ

Հավելված 1. Տարածքի սեփականության իրավունքի վկայականը, պետական ռեգիստրը

Հավելված 2. Ճարտարապետա-հատակագծային առաջադրանքը:

Հավելված 3. Տարածքի կադաստրային քարտեզը, կոորդինատները՝ WGS համակարգով:

Հավելված 4. Տարածքի գլխավոր հատակագիծը:

Հավելված 5. Էլեկտրամատակարարման տեխնիկական պայմանները

Հավելված 6. Կանաչապատման հատակագիծը

Հավելված 7. Պատմամշակութային և հնագիտական ուսումնասիրության եզրակացությունը

Հավելված 8. Համայնքի ավագանու որոշումը

Հավելված 9. Հանրային քննարկման թերթի հայտարարություն, արձանագրությունը, մասնակիցների ցանկը , լսման նկարներ:

Հավելված 10. Մթնոլորտային օդի հաշվարկ

Հավելված 11. Պետական տուրքի անդորրագիրը:

3. Գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենք- Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք՝ ՀՕ-121-Ն ((ընդունված՝ 1994թ. և լրամշակված՝ 2022թ.)- կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) -Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.)-Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)-Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն

վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.) - Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպա-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.)-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

«ՀՀ ջրային օրենսգիրք» (2002) - Նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.)- Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998)-կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը:

«Քաղաքաշինության Բնագավառում Իրավախախտումների Համար պատասխանատվության մասին» ՀՀ Օրենքը (28 ապրիլի 1999թ.) -Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը՝ քաղաքաշինական գործունեության բոլոր փուլերում քաղաքացիների, հասարակության ու պետության շահերը պաշտպանելու, օրենսդրական ակտերի, ստանդարտների ու կանոնների պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

ՀՀ կառավարության որոշումներ

- ❖ **ՀՀ կառավարության 28** դեկտեմբերի 2023 թվականի «Հայաստանի հանրապետության կառավարության 2014թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343 - Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 29 հունվարի 2010թ.** «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N72-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 29 հունվարի 2010թ.** «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 31.07.2014թ.** ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 8 սեպտեմբերի 2011թ.** «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի N 286-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N1396-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008թ.** «Հայաստանի հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 15 մարտի 2007թ.** «ՀՀ Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» N 385-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության թվականի 14 սեպտեմբերի 2006թ.** «Թափոնների հաշվառման, գոյացման, հեռացման (ոչնչացման, վնասագերծման, տեղադրման) և օգտահանման կարգը սահմանելու մասին» N 1343-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 12 ապրիլի 2018թ.** «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N426-Ն որոշում:
- ❖ **ՀՀ կառավարության 08.02.2018թ.** «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՆԱԶ ԳՈՏԻՆԵՐԻ ԶԱՓԵՐԻՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՅԻՆ ԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 1318-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 108- Ն որոշում:

4. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ համաձայն: Գործունեություն, որը կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության:

Համաձայն Օրենքի՝ գործունեությունները դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա և Բ: Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա ենթակետի Քաղաքաշինության բնագավառում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա են. «Քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում՝ 1500 քմ և ավելի, վերգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով կամ 2000 քմ և ավելի ստորգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով»:

Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա ենթակետի՝ սույն նախատեսվող գործունեությունը ներառված է Բ կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության է ենթակա Բ կատեգորիայի ընթացակարգով:

Գնահատման հաշվետվության բովանդակությունը կազմվել է Օրենքի 15-րդ հոդվածի Բ կատեգորիայի նախատեսվող գործունեության՝ ՇՄԱԳ հաշվետվությանը ներկայացվող պահանջներին համապատասխան.

1) նախաձեռնողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.

2) նախատեսվող գործունեության անվանումը՝ սույն օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան.

3) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների նկարագիրը, ինչպես նաև դրանց օգտագործման նպատակը, ենթակառուցվածքները, ազդակիր համայնքը և դրանց տեղադիրքն արտացոլող իրավասու մարմնի տրամադրած տարածական պլանավորման փաստաթղթերը, իրադրության սխեման կամ քարտեզը՝ Հայաստանի Հանրապետությունում գործող միասնական գեոդեզիական կոորդինատային համակարգով.

4) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության բնութագիրը շինարարության, շահագործման, փակման և հետփակման փուլերում (արտադրական հզորություններ, օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ).

5) շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները շինարարության, շահագործման և փակման փուլերում.

6) մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը.

7) նախագծային փաստաթղթով նախատեսված բնապահպանական կառավարման պլանը.

8) հաստատված հիմնադրությային փաստաթղթերին նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության համապատասխանության հիմնավորումները.

9) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման ծրագիրը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, նախատեսել համապատասխան միջոցառումներ՝ հնարավոր բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելուն կամ բացառելուն ուղղված: Գնահատման հաշվետվություն կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր:

5. Նախաձեռնողի անվանումը, գործունեության գտնվելու վայրը, իրականացման նպատակը

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է «ՖԱՅՐԲԸՐԴ ԷՅԱՅ» ՓԲԸ-ի կողմից, որի իրավաբանական հասցեն է՝ Երևան, Ազատության պող./24/1 Արաբկիր 0014:

Նախատեսվող գործունեության նպատակը «Ֆայրբրդ» ՓԲԸ-ի կողմից Կոտայքի մարզի Հրազդան համայնքի քաղաք Հրազդան 20 հասցեում՝ 5.81305հա տարածքի վրա կառուցել արհեստական բանականության տվյալների կենտրոն:

Կառուցապատման տարածքը տրված է սեփականության իրավունքով:

Գործունեության ենթակա տարածքի հողի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:

6. Գնահատման հաշվետվության մշակման հիմքերը

«ՖԱՅՐԲԸՐԴ ԷՅԱՅ» ՓԲԸ-ի Հրազդան համայնքի քաղաք Հրազդան 20 հասցեում հասարակական նշանակության շինության՝ Արհեստական Բանականության տվյալների կենտրոնի կառուցման հաշվետվությունը մշակված է հիմք ընդունելով.

- կառուցապատման նախագծային փաստաթղթերը,
- համալիրի տեղամասի ինժիներա-երկրաբանական հետազոտությունների հաշվետվությունը,
- համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները,
- սեփականության վկայական՝ N 14052026-07-0058: Հավելված 1
- ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ ՆԹ-6132-26, տրված՝ 15.05.2026թ.,

7. Նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների բնութագիրը.

7.1 Գործունեության իրականացման ենթակա տարածք.

Կառուցապատման ենթակա տարածքը գտնվում է Կոտայքի մարզի Հրազդան համայնքի քաղաք Հրազդան 20 հասցեում, իրավունքի տեսակը՝ սեփականություն, հողի նպատակային նշանակությունը բնակավայրի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:

Նախկինում տարածքի հասցեն եղել է Հրազդան Ջրառատ թաղամասի 1 հասցե, ուստի պատմամշակութային եզրակացությունում, Ավագանու որոշումում և որոշ տվյալներում ներկայացված է նախկին հասցեն, ինչը փոփոխվել է նոր տրամադրված կադաստրի վկայականով: Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի վարչական տարածքի հարավ-արևելյան կողմում, երկաթգծի գծուղուց և դեպի Ջրառատավան տանող ճանապարհից հարավ-արևելք՝ դաշտամիջյան հատվածում: Տարածքի ռելիեֆը բլրաթմբային է: Կից գտնվում են բնակիչներին պատկանող հողատարածքներ, համայնքային հողեր: Տարածքում բացակայում են քանդման ենթակա շենքերը, շինությունները, ծառերը, ծառափերը, կանաչ տարածքները: Նախկինում տարածքը բնակիչների կողմից օգտագործվել է որպես վարելահողեր:



Գործունեության տարածքում կատարվել են մասնակի հողաշինական աշխատանքներ՝ պայմանավորված երկրաբանահետախուզական աշխատանքներով:

Տարածքի իրադրության սխեման, իրավիճակային հատակագիծ:

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:5000





Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է միջպետական ավտոճանապարհից 3496մ, տեղական ավտոճանապարհից՝ 2787մ, հանրապետական նշանակության ճանապարհից՝ 1370մ, Ջրառատ գյուղի ամենամոտ բնակելի տնից՝ 902մ և 994մ, Մարմարուկ գետից՝ 2388մ, Հրազդան գետից՝ 2կմ-ից ավել, երկաթգծից՝ 60 մ, Հրազդան ՋԷԿ-ից՝ 4 կմ հեռավորությունների վրա: Մինչև 8կմ շառավղով Բնության հուշարձանները բացակայում են: Գործունեության տարածքում և հարակից տարածքներում բացակայում են պատմամշակութային և բնության հուշարձանները:

2025թ. նոյեմբերին «ԳԵՈՌԵՍԵԲԶ» ՍՊԸ-ի կողմից կատարվել են նախատեսվող գործունեության 2.0հա տարածքի վրա ինժեներա-երկրաբանական ուսումնասիրությունների գնահատման աշխատանքներ տարածքի ինժեներա-երկրաբանական տեղագնում, մերկացումների և առկա փոստրակների տեղագնում, հորատանցքերի հորատում, Հորատանցքերից խախտված և բնական կառուցվածքի փորձանմուշների ընտրում, փաթեթավորում, տեղափոխում և լաբորատոր փորձարկումներ: Միաժամանակ կատարվել են նախկինում տարբեր գիտա-արտադրական և նախգծա-հետազոտական կազմակերպությունների կողմից, տվյալ և հարակից տարածքներում իրականացված ուսումնասիրությունների հաշվետու նյութերի հավաքում, ամփոփում և ընդհանրացում, հաշվետվության տեսքով, որի հիման վրա կազմվել է եզրակացություն:

Հորատվել են 17 հորատանցքեր (7 հորատանցքեր յուրաքանչյուրը 12.0 գծամետր, 5 հորատանցքեր յուրաքանչյուրը 10.0 գծամետր խորությամբ և 5 հորատանցքեր յուրաքանչյուրը 8.0 գծամետր խորությամբ):

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը տեղադրված է Հրազդան գետի վերին հոսանքի աջակողմյան տափարակի սահմաններում՝ Գեղամա լեռնաշղթայի հյուսիսային լեռնաբազուկների հյուսիս-արևմտյան ուղղություններ ունեցող լանջերի ստորոտային մասերում: Տարածքը ներկայացված է հիմնականում բլրաթմբային ռելիեֆով նորագույն էֆֆուզիվ առաջացումներով, Գեղամա լեռնաշղթային լանջերից իջնող լավային հոսքերով ձևավորվող Հրազդանի սարահարթի (1700-1800 մետր բացարձակ նիշերի բարձրություն) սահմաններում:

Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 1749.0-1755.0 մետրի սահմաններում:

Կլիմա. Հետազոտվող տեղամասն ունի չոր, մայրցամաքային կլիմա, որի ձևավորման վրա մեծ դեր են խաղում աշխարհագրական դիրքը, ռելիեֆի առանձնահատկությունները, տարածքի պաշտպանվածությունը բարձր լեռնային զանգվածներով, ինչպես նաև Իրանական և Փոքրասիական մայրցամաքային լեռնային գոտիներին մոտ լինելը: Համաձայն ՀՀ կլիմայական շրջանացման քարտեզի՝ տարածքը գտնվում է ցուրտ կլիմայական գոտու մեջ: Կլիման բնորոշվում է հիմնականում երկարատև զով ամառով և համեմատաբար ցուրտ ձմեռով: Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթղթի՝ օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը հասնում է 35°C, օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը հասնում է -31.5°C, տարեկան մթնոլորտային տեղումների քանակը կազմում է 689մմ, Օդի տարեկան միջին հարաբերական խոնավությունը կազմում է 79%, քամու միջին տարեկան արագությունը՝ 2,3մ/վրկ, գրունտի սառեցման խորությունը կազմում է 92 սմ:

Երկրաբանական կառուցվածքը. Շրջանի և հետազոտվող տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են Միոցեն-Օլիգոցենի հասակի Հայկական բարձրավանդակի հրաբխային հաստույթի դուլերիտային և օլիվինային բազալտները, անդեզիտա-բազալտները և անդեզիտները, անդեզիտա-դացիտները, դացիտները, մասամբ տուֆաբրեկչիաները և

տուֆերը, որոնց վերադրված է Վերին Չորրորդականի հասակի լավաները՝ բազալտներ, անդեզիտա-բազալտներ և անդեզիտներ, հրաբխային խարամներ, ավազներ և պեմզաներ: Տարածքի երկրաբանական կտրվածքին մասնակցող արմատական ապարների շերտերը ծածկված են բերվածքային առաջացումների էյուվիա-պրոյուվիալ, էյուվիա-դէյուվիալ և էյուվիալ ծագման կավային, ավազային և խոշորա-բեկորային կազմի գրունտների շերտերով: Հորատման աշխատանքների ընթացքում մինչև 12.0 մետր խորությամբ փորված հորատանցքերում բացահայտվել են ինչպես ժամանակակից բերվածքային առաջացումների շերտախմբերը, այնպես էլ Վերին Չորրորդականի հասակի լավաները՝ բազալտներ, անդեզիտա-բազալտներ, հրաբխային խարամներ և ավազներ:

Տիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ բացակայում են:

Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերը կապված են Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումների չստորաբաժանված համախմբերի հետ, որոնք պատկանում են միջլավային և լավատակի ջրերի տարատեսակներին: Ստորգետնյա ջրերը հորատանցքերով մինչև 12.0 մետր խորությունը չեն բացահայտվել, համաձայն ֆոնդային նյութերի տվյալների դրանք տեղադրված են 25.0 մետրից խորը: Տարածքը ընդհանուր առմամբ ներկայացված է ճեղքավորված բազալտներով և խարամային գրունտներով, որոնք ունեն ջրաթափանցելության մեծ արժեքներ, որով էլ պայմանավորված մակերեսային ջրերը, հատկապես առատ մթնոլորտային տեղումների և ձնհալի ժամանակ, ներթափանցելով գրունտային զանգվածների մեջ, բազալտային գրունտների զանգվածների մակերեսային մասերում առաջացնում են ժամանակավոր ջրահոսքեր(վերնաջրեր): Սրանք կրում են սեզոնային բնույթ և ունեն խիստ սահմանափակ տարածում:

Ջրային ցանցը տարածաշրջանում քիչ է զարգացած, տարածքի հիմնական ջրային երակ է հանդիսանում Հրազդան գետը, իր Մարմարիկ վտակով, մի շարք մանր ջրահոսքերով և ջրանցքներով: Հրազդան գետի ռեժիմը հիմնականում կարգավորված է տարատեսակ հիդրոտեխնիկական կառույցներով: Հետազոտվող տեղամասը գտնվում է Հրազդան գետի հոսանքի աջակամային սարահարթի սահմաններում, որի ռելյեֆը խիստ կտրտված է բազմաթիվ ձորակ հեղեղատների հուներով և ոչ շատ խորը ձորակներով: Վերոհիշյալ ձորակներում ջրային մշտական հոսքեր չկան, սակայն ինտենսիվ ձնհալի և առատ մթնոլորտային տեղումների ժամանակ դրանցում ձևավորվում են ժամանակավոր ջրահոսքեր, գետակներ:

Սեյսմա-տեկտոնական բնութագիրը: Սեյսմա-տեկտոնական տեսակետից շրջանը տեղադրված է Հայաստանի ծալքավոր գոտու, Վերին ալպիական ծալքավորման մարզի Ծաղկունյաց հորստ-անտիկլինալի և Հրազդան-Մարմարիկ իջվածքի արևելյան կողմում, Գեղամա լեռնաշղթայի հյուսիս-արևմտյան լեռնաբազուկների ստորոտային մասերում, համարվում է Հայկական բարձրավանդակի ամենասեյսմակալ գոտիներից մեկը:

Շրջանի սեյսմիկ պայմաններն ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի նորմերի, տեղագնվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max} = 0.4g$ արագացմամբ:

Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը. Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքը հիմնականում ներկայացված է Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումներով(Ժայռային բազալտներ և խճա-բեկորային կազմի հրաբխային խարամներ): Իրականացված աշխատանքների հիման վրա տեղամասի ինժեներա-երկրաբանական կառուցվածքում առանձնացվել են գրունտների հետևյալ չորս տարատեսակները.

Շերտ թիվ-1 հողաբուսական ծածկույթ՝ կավավազային կազմի, հազվադեպ խճով և մեծաբեկորներով, ավազային նյութի խառնուրդով մինչև 15%, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.2-0.6 մետր:

Շերտ- 2 ավազակավ, կավավազ մանրախճային, դարչնագույն, պինդ թանձրության, խճային, հազվադեպ բեկորային նյութի պարունակությամբ, տեղ-տեղ փոշային ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով, փուխր, միջին խտության, սակավախոնավ, հզորությունը՝ 0.3-7.6 մետր: Չորրորդականի հասակի էյուվիա-պրոյուվիալ առաջացումներ են:

Շերտ թիվ-3 խճային գրունտ, հազվադեպ մեծաբեկորներով, խարամացած հրաբխային ապարներից, կավային գրունտների(կավավազ, ավազակավ) և փոշենման ավազի լցանյութով մինչև 30%, փոշենման ավազի նրբաշերտերով, գրունտը մասամբ ցեմենտացած է, լցանյութը՝ սակավախոնավ, տարածումը սահմանափակ է, հզորությունը՝ 1.7-6.0 մետր:

Չորրորդականի հասակի էյուվիա-պրոյուվիալ առաջացումներ են:

Շերտ թիվ-4. բազալտ, անդեզիտա-բազալտ, մոխրագույն, մեծաբեկորային, բլոկային, թույլ ծակոտկեն, մասամբ փոքր միջակայքերում ջարդոտված բեկորների և խճի աստիճանի, հազվադեպ միջբեկորային կավավազային լցանյութով, ամուր, արմատական տեղադրմամբ, տարածումը համատարած է, բացահայտված հզորությունը՝ 2.2-9.3 մետր: Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումներ են:

Ինժեներակրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար: Հիմքերի տեղադրման համար ընտրելի է խոշորաբեկորային բազալտ, անդեզիտա-բազալտների հաստվածքը, որը բնութագրվում է կայուն հատկանիշներով:

Միաժամանակ անհրաժեշտ է նախատեսել.

- հիմքերի հիմնատակի մակարդակում կատարել մեխանիկական խտացում (ռամբով, թրթռամեխանիզմով և այլն)՝ ոչ պակաս, քան միջին-խիտ կամ խիտ վիճակի հասնելու համար:
- Հիմքերի ազդեցության գոտում անհրաժեշտ է բացառել թույլ կավային ենթաշերտերի և փոփոխական հզորությամբ գոտիների առկայությունը և, անհրաժեշտության դեպքում, կատարել դրանց տեղային փոխարինում խտացված խիճա-քարքա-ավազային բարձիկով:
- Հաշվարկներում նպատակահարմար է ընդունել դրենացված պարամետրեր $c = 0$, $\varphi \approx 38-40^\circ$, իսկ նստվածքների գնահատման ժամանակ հաշվի առնել գրունտի հնարավոր լրացուցիչ խտացումը շահագործման բեռնվածությունների ազդեցության տակ:

7.2. Շրջակա միջավայրի բնութագրերը

7.2.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը.

Կոտայքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական մասում, ծովի մակերևույթից մոտ 900- 2500մ բարձրության վրա: Տարածքն ընդգրկում է Հրազդան գետի վերին և միջին ավազանը, ինչպես նաև Մարմարիկ գետի ավազանն ամբողջությամբ: Հյուսիսից սահմանափակվում է Գուրանասար, իսկ հյուսիս-արևելքից՝ Հատիսի լեռնազանգվածներով: Հարավ-արևմուտքում աստիճանաբար ցածրանալով՝ ձուլվում է Արարատյան դաշտին:

Հիմնական լեռնագրական միավորներն են Կոտայքի և Եղվարդի բլրաալիքային

սարավանդները, Մարմարիկի վտակներով կտրտված Փամբակի լեռնաշղթայի լանջերը, Գեղամա լեռնաշղթայի լեռնաճյուղերն ու լավային հոսքերը:

Կոտայքի մարզի բնական պայմաններն ու հարստությունները բազմազան են: Մարզի տարածքն աչքի է ընկնում բարձր լեռնագագաթներով ու խորը կիրճերով, լայնարձակ գետահովիտներով ու մեղմաթեք սարավանդներով, լավաների մեջ գոյացած բազալտե սյունաձև առանձնացումներով՝ անձեռակերտ բազմանիստ պրիզմաների տեսքով:




Հրազդան գետի ձախափնյա հատվածն իրենից ներկայացնում է Գեղամա զանգվածից հոսող լավային հոսքերից առաջացած սարահարթ՝ ծածկված տարբեր բարձրության բլուրներով:

Տարածաշրջանի աշխարհագրական դիրքն ընդհանուր առմամբ նպաստավոր է: Մարզում Գեղամա լեռները կազմող հրաբխային ապարների մեջ ներծծվող ջրերի աղբյուրների տեսքով դուրս են գալիս լեռների ստորոտներում, ինչպես նաև Հրազդան և Ազատ գետերի կիրճերում, որոնցից են Քառասունակնի, Արզնիի և Գառնիի աղբյուրները:

7.2.2. Շինհրապարակի սեյսմիկ պարամետրերը և երկրաբանություն

Շրջանի սեյսմիկ պայմանները. Տարածաշրջանի ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են: Տարածաշրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին-կավիճ, միջին-միոցենի հասակի մետամորֆիզացված բյուրեղացված թերթաքարերը, մարմարային ապարները, չորրորդական հասակի անդեզիտաբազալտներով և անդեզիտադացիտներով լավաները՝ ծածկված կրաքարերով, նստվածքային և հրաբխային ապարներով, ավազային և խոշորաբեկորային գրունտներով:

Համաձայն ՀՀՇՆ-20.04.2020թ.-ի նորմատիվային փաստաթղթի՝ ըստ սեյսմիկ հատկության տարածաշրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max}=0.4g$ արագացմամբ:



7.2.3. Կլիմա և օդային ավազան

Գործունեության ենթակա տարածքի կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը՝ Հրազդան քաղաքի համար: Ուսումնասիրվող տարածքը գտնվում է չափավոր կլիմայական շրջանում: Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը՝ 35,0°C, բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ -31.5°C, օդի հարաբերական միջին տարեկան խոնավությունը՝ 72%, տարեկան միջին մթնոլորտային տեղումների քանակը՝ 689մմ, քամու միջին տարեկան արագությունը 2.3մ/վ, 25 տարվա կրկնելիությամբ՝ 20մ/վ, գրունտի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 92սմ, ջեռուցման ժամանակաշրջանի հաշվարկային մեծությունը կազմում է 222 օր:

Հրազդանում ձմռան տևողությունը տևում է 126օր՝ նոյեմբերի 22-ից մարտի 27-ը: Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Հրազդան քաղաքի կլիմայական նորմերի բնութագրի:

**ՕԴԻ ՄԻՋԻՆ ԵՎ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ,
ՁՄՈՒԱՆ ՍԿԻՋԲԸ, ՎԵՐՋԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

Աղյուսակ 1 Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	
19. Հրազդան		-7.8	-6.1	-1.5	5.2	10.3	14.1	17.4	17.4	13.7	7.6	1.3	-4.8	5.6	-31.5	35.0

ՕԴԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 10 Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	ըստ ամիսների													Միջին տարեկան	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական, ժամը 15-ին	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	
19. Հրազդան		79	77	74	71	70	70	68	65	66	70	76	79	72	79	69	68	52

ՄԹՆՈՂՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ


Աղյուսակ 12 Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը _____ միջին ամսական _____ մմ _____ օրական առավելագույն													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների												Տարեկան		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
19. Հրազդան	46	55	66	88	100	66	45	30	33	61	52	47	689	266	423
	40	47	45	52	52	42	50	42	49	64	49	34	64		

Աղյուսակ 15 Քամի (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, %					ըստ ուղղությունների			Անդրորի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Փերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Փերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Միջին արագությունը, մ/վ					Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան						
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային									
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
23. Հրազդան	հունվար	2	5	11	4	19	39	18	2	27	1.9	Արլ	2.9	Արմ	2.4
		2.3	2.4	2.0	1.4	1.9	2.3	2.4	1.7						
	ապրիլ	4	14	19	6	13	21	20	3	15	2.1				
		2.3	2.7	2.2	1.8	1.9	2.3	2.4	2.0						
	հուլիս	8	45	35	2	2	3	4	1	7	2.8				
		3.5	3.2	2.9	1.9	2.0	1.9	2.4	2.2						
	հոկտեմբեր	3	12	23	6	11	20	22	3	26	1.7				
		2.0	2.2	2.0	1.7	1.8	2.1	2.2	2.0						

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ
ՇՐՋԱՆԱՑՈՒՄԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**



Օդային ավազան. Հայաստանի Հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ հանրապետության տարածքի 45 (այդ թվում՝ 6 դժվարամատչելի և 3 մասնագիտացված) օդերևութաբանական կայանում:


ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց




Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը:

Մարդու գործունեության հետևանքով մթնոլորտային օդ կարող են արտանետվել տարատեսակ գազեր և տարբեր չափերի մասնիկներ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշման:


Հրագրան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 17 շարժական դիտակետ: 2026թ. հունվար ամսվա ընթացքում փոշու և ազոտի երկօքսիդի օրական կոնցենտրացիաները գերազանցել է ՍԹԿ-ն համապատասխանաբար 1.1-2.1 անգամ (7 օր) և 1,1-1.5 անգամ(7 օր): Փոշու առավելագույն կոնցենտրացիան (401մկգ/մ³) դիտվել է հուլիսի 24-ին: Ծծմբի երկօքսիդի գերազանցումներ համապատասխան ՍԹԿ-ից չեն դիտվել:



Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում փռշու կոնցենտրացիաները



Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաները



Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում օծմբի երկօքսիդի կոնցենտրացիաները

Համաձայն «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումներ»-ի բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների (միջին հնգամյակոնցենտրացիան՝ ֆոն) քաղաքների համար, որոնց թվին է պատկանում Հրազդան բնակավայրը, օդի աղտոտվածության ցուցանիշներն են.

- Ազոտի երկօքսիդ (NO_2)՝ 0,011 մգ/մ³
- Ծծմբի երկօքսիդ (SO_2)՝ 0,011 մգ/մ³
- Փոշի՝ 0.141 մգ/մ³

Համաձայն «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումներ»-ի օդի ֆոնային կոնցենտրացիաները 10-50 և մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին է դասվում Ջրառատ բնակավայրը, օդի ֆոնային կոնցենտրացիաներն են.

- Փոշի՝ 0.095 մգ/մ³
- Ծծմբի երկօքսիդ (SO_2)՝ 0,006 մգ/մ³
- Ազոտի երկօքսիդ (NO_2)՝ 0,033 մգ/մ³
- Ածխածնի օքսիդ (CO)՝ 1.1 մգ/մ³

7.2.4. Հողային ռեսուրսներ.

Կոտայքի մարզն աչքի է ընկնում իր խայտաբղետ հողաբուսական ծածկույթով: Այստեղ հիմնականում գերակշռում են լեռնատափաստանային և լեռնաշագանակագույն, իսկ բարձրադիր վայրերում տարածված են ենթալպյան լեռնամարգագետնային, սևահողանման ու դարչնագույն հողերը, սարավանդային հատվածներում՝ շագանակագույն հողերը և չոր տափաստանային լանդշաֆտները: Լեռնալանջերի սևահողային ծածկույթի վրա ձևավորվել են լեռնային տափաստանները:

եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման դիտարկումներ են իրականացվել միայն Կոտայքի մարզի Հանքավան տեղամասում: 2025թ. եռամսյակային տեղեկագրերում Հրազդան համայնքի հողերի աղտոտվածության վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է:

7.2.5.Ջրային ռեսուրսներ

Մարզի ջրային ավազանը բավականին հարուստ է: Կոտայքի սարավանդն ընկած է Հրազդան գետի միջին հոսանքի ձախափնյա մասից մինչև Գեղամա լեռների արևմտյան ստորոտը: Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքն (ՋԿՏ) ընդգրկում է 2 հիմնական ջրավազաններ՝ Հրազդան և Քասախ: Հրազդանի ՋԿՏ-ում ընդգրկված են 10 կմ և ավել երկարությամբ 20 գետեր, 1 մլն մ³ և ավելի ծավալով 9 ջրամբարներ, բնական լճեր՝ Քարի և Ակնա, ինչպես նաև 7 առաջնային, 4 դերիվացիոն և 7 երկրորդային ջրանցքներ: Գետի և լճի ջրերը մարզում օգտագործվում են ոռոգման նպատակով: Մարզի տարածքով են հոսում Հրազդան, Մարմարիկ, Մեղրաձոր, Ծաղկաձոր, Դալար, Արջաձոր, ինչպես նաև Գետառ և Ազատ գետերը, Հանքավանի ջրամբարը: Այստեղ են գտնվում նաև 3032մ բարձրության վրա գտնվող Ակնա լիճը, Սևաբերդի, Մարմարիկի և Ախպարայի ջրամբարները: Մարզը հարուստ է նաև քաղցրահամ ջրերի աղբյուրներով՝ Գառնիի, Կաթնաղբյուրի, Սուլակի, Ալափարսի, Նուռնուսի, Արզականի, Գյումուշի, Մաքրավանի, որոնք խմելու ջրով ապահովում են ոչ միայն մարզի բնակավայրերը, այլ նաև Երևան քաղաքը:

Հրազդան գետ. Համաձայն 2022թ. դեկտեմբերի 8-ի ՀՀ կառավարության «ՀՐԱԶԴԱՆԻ ԶՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ 2022-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N1909-Ն որոշման Հրազդան գետն ունի 141 կմ երկարություն, ավազանի մակերեսը կազմում է 2560 կմ² է (առանց Սևանա լճի): Սկիզբ է առնում Սևանա լճից, հոսում հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևելք, անցնում Գեղարքունիքի, Կոտայքի մարզերով, Երևան քաղաքով, Արարատի մարզով, դուրս գալիս Արարատյան դաշտ, դառնում հանդարտահոս ու թափվում է Արաքս գետը: Վերին հոսանքում առաջացնում է գալարներ, դարավանդներ: Գետավազանի մակերևույթի ամենաբարձր կետը կազմում է 3467 մ, իսկ ամենացածր կետը՝ 790 մ, որը Արաքս գետին միախառնվելու հատվածն է: Բնական պայմաններում Հրազդանի սնումը 62,5%-ով ստորերկրյա է, հորդացումը՝ գարնանային, վարարումները լինում են ամռանն ու աշնանը: Ջրի տարեկան միջին ծախսը 22,6 մ³/վրկ է, առավելագույնը՝ 138 մ³/վրկ, նվազագույնը՝ 9 մ³/վրկ, տարեկան հոսքը 712 միլիոն մ³:

Հրազդանի վրա կառուցվել են Սևանի, Հրազդանի, Արգել, Արգնիի, Քանաքեռի, Երևանի ՀԷԿ-երը, մի շարք ջրանցքներ, Երևանյան լիճը: Հրազդան գետը հոսելով հանրապետության կենտրոնական շրջաններով և մայրաքաղաքի միջով, համարվում է հանրապետության հիմնական ջրային զարկերակներից մեկը: Խոշոր վտակներն են Մարմարիկը, Ծաղկաձորը, Դալարը, Արագետը:

Հրազդան գետի աջափնյա ամենախոշոր վտակը Մարմարիկն/Մարմարուկ/ է: Ունի 37 կմ երկարություն և 427 կմ² ջրհավաք ավազանի մակերես: Գետի հոսքը ձևավորվում է Փամբակ և Ծաղկունյաց լեռնաշղթաներից սկիզբ առնող գետերի ջրերով: Այն թափվում է Հրազդան գետ,

վերջինիս գետաբերանից 116 կմ հեռավորության վրա: Մարմարիկի առավել խոշոր վտակներից են Գոմրագետը, Երկարգետը և Ծաղկամարգը:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 6 գետավազանային կառավարման տարածքների միջոցով՝ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերնութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Հրազդանի ՋԿՏ-ում մակերևութային ջրերի հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 հիդրոլոգիական դիտակետում. այդ թվում՝ 13 գետային. 2 ջրամբարային և մեկ 1 ջրանցքային: Ջրերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման 12.1 հավելվածի:



Համաձայն Գլխավոր (www.armmonitoring.am) էլեկտրոնային էջի՝ 2025 թվականի 3-րդ եռամսյակում կատարված հիդրոլոգիական դիտարկումների՝ Հրազդանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 20 դիտակետում:

Հրազդան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ հատվածում օգոստոսին և

սեպտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Քաղսի գյուղից ներքև և Արգել գյուղից ներքև հատվածներում երեք ամիսների ընթացքում՝ «միջակ» (3-րդ դաս), Արգնի ՀԷԿ-ից վերև հատվածում ջրի որակը հուլիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), օգոստոսին՝ «անբավարար» (4-րդ դաս), սեպտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հատվածում հուլիսին և օգոստոսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), սեպտեմբերին՝ «լավ» (2-րդ դաս), գետաբերանում՝ երեք ամիսների ընթացքում՝ «անբավարար» (4-րդ դաս):


Հիդրոերկրաբանական տեսակետից. Համայնքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են, բայց որոշակի բարդություն են առաջացնում կապված՝ երկրաբանական կառուցվածքի, ապարների լիթոլոգիական կազմի, ռելիեֆի և կլիմայի հետ: Գրունտային ջրերը (շերտային) կապված են դելյուվիալ-պրոլյուվիալ և ալյուվիալ-պրոլյուվիալ նստվածքների հետ: Ջրային հոսքերը՝ պայմանավորված կավաավազային, խճային ապարների, լավային հոսքերի ջրառատությամբ, ձևավորում են բազմաթիվ տարբեր դեբիտային ելքերով ջրային ելքեր՝ աղբյուրների տեսքով:

Հրազդան գետի ձախակողմյան վտակների մի մասը գետնի տակ ներծծված ջրերի շնորհիվ գարնանը դուրս են ցայտում՝ «40 աղբյուր» անվանումով:

7.2.6. Կենսաբազմազություն.

Նախատեսվող գործունեության տարածաշրջանը բուսաշխարհագրական տեսակետից պատկանում է Հայաստանի Հանրապետության Երևանի ֆլորիստիկ շրջանին (Թախտաջյան, 1978): Բուսականության հիմնական տիպը լեռնատափաստանն է: Հողերի մշակումը, դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծումը, խոտհարքերը, նաև հրդեհները բացասաբար են ազդում հանրապետության բուսածածկույթի և կենդանական աշխարհի վրա:

Տարածաշրջանում գերակշռում են կիսաանապատային, լեռնատափաստանային լանդշաֆտները՝ համապատասխան տափաստանային, նոսրանտառային, անտառային և մարգագետնային բուսականության տիպերով և վերջիններիս բնորոշ կենդանական աշխարհով:



Քուսական աշխարհ:

Տարածաշրջանի անտառային էկոհամակարգերին բնորոշ են կաղնուտային, բոխուտային լայնատերև խառը անտառները ու հետանտառային նոսրաանտառները: Այստեղ աճում են Կաղնի խոշորատեղը(*Quercus macranthera*), բոխի (*Carpinus betulus*), բոխու տեսակներ (*Aser campestre*, *Aser trautvetteri*), արոսենի (*Sorbus umbelata*) և այլ՝ հացենի, թխկի, լորենի, սոճի, թեղի, ալոճենի, մասրենի, հաղարջենի, ազնվամորի և այլ ծառաթփային բուսատեսակներ: Քաղաքին հարակից անտառներում հանդիպում են նաև վայրի տանձենի (*Pyrus sp.*, *P. georgica*, *P.communis*) և ինձորենի (*Malus silvestres*): Կանաչապատ տարածքներում հանդիպում են եղևնի, նոճի, արևմտյան գիհի, կենսածառ արևելյան, սպիտակ/ լացող ուռենիներ, հացենի, լորենի: Թփուտներից տարածված են յասամանր, հաղարջը, նեղտերև փշատենի և այլն: Փամբակի և Ծաղկունյաց լեռների լանջերին տարածված են թխկու, կաղնու, արոսենու անտառները:

Տարածաշրջանի բուսականությունը հիմնականում լեռնատափաստանային տարախոտեր են, հացազգիների գերակշռությամբ՝ ոզնախոտ(*Dactylis Woronovii*), սեղ տափաստանային (*Phleum phleoides*), դաշտավլուկ սոխուկավոր (*Poa bulbosa*), կելերիա սանրաձև (*Koeleris cristata*), ցորնուկ ցցամազ (*Bromus squarrosus*), շյուղախոտ ակոսավոր (*Festuca sulcata*), մերձալպյան բարձրախոտերից՝ իշաովույտ նեապոլիտական (*Melilotus*

neapolitanus), եղինջ երկտուն (*Urtica dioica*), ծվծվուկ կտրտված (*Silene multifida*) և այլն:



Կոտայքի մարզում աճում են 54 տեսակի բույսեր, որոնք գրանցված են ՀՀ բույսերի Կարմիր գրքում: Կոտայքի մարզի և տարածաշրջանի ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներից են՝ Ճավշիր պարսկական (*Oropanax persicus* Boiss). Ճարտարուկ Արարատի (*Draba araratica* Rupr), Ճարտարուկ խոզնավոր (*Draba hispida* Willd), Էվնոմիա կլորատերև (*Eunomia rotundifolia* C. A. Mey.), Ջրահարս փոքր (*Najas minor*), Աղածաղիկ Կուլպական (*Halanthium kulpianum* (K. Koch Bunge), Երնջակա Վանաստուրի (*Eryngium wanaturii* Woronow), ոգնաթուփ վարսակային (*Acantholimon avenaceum*), Տերեփուկ Թախտաջյանի (*Centaurea Takhtajanii*) և այլն: ՀՀ կարմիր գրքում ներառվել է նաև Գառնատվույտ լազիստանյան- *Oxytropis lazica* Boiss տեսակը: Կատեգորիա. EN B 1 ab(i,ii,iii) +2ab(i,ii,iii), վտանգված տեսակ է, տարածման և բնակության շրջանների մակերեսը 500քառ. Կմ-ից պակաս է: Արեալը խիստ մասնատված է: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգծված էր 3 կարգավիճակով՝ կրճատվող տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգծված չէ:



Ճավշիր պարսկական

Կենդանական աշխարհ: տարածաշրջանի կենդանական աշխարհին բնորոշ են անողնաշարավորների՝ միջատների, բզեզների, մորեխների տեսակային բազմազանությունը: Ողնաշարավոր կենդանիներից հանդիպում են կրիաներ, օձեր, մողեսներ, թռչուններից՝ սև անգղ, կեռնեխ, արտույտ, կաքավ, ծիծեռնակ, ճանճորսներ և այլն, կաթնասուններից՝ եղջերուն, գայլը, գորշ արջ, վայրի խոզ, աղվես, աքիս, կզաքիս, չղջիկներ և այլն:

Կոտայքի մարզում ՀՀ Կարմիր գրքում գրանցված են անողնաշար կենդանիների՝ 62, ողնաշարավոր կենդանիների 28 տեսակներ:

Հրազդան գետի ակունքներում գտնվում է ՀՀ Կենդանիների Կարմիր գրքում գրանցված Հարթ խխունջը(*Gyraulus laevis*):

Կոտայքի մարզում ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներից են՝ Մորեխ հայկականը(*Gomphocerus armeniacu*, Հաստածղրիդ լայնացած (*Bradyporus dilatatus*), Թամբակուրծք թարախահան(*Mylabris sedilithorax* SumakovԵ սևամարմին (*Cylindronotus erivanus*), ապոլոն (*Parnassius apollo kashtshenkoi* Sheljuzhko), Աֆրիկյան փրոթերերիա(*Proterebia afra hyrcana*), Ալեքսանդր երկարաչափ թիթեռ (*Eupithecia alexandriana* Wardikian), Ռավազինի մրջյուն(*Myrmica ravasini* Finzi), Հայկական իժ(*Viperaa* (*Montivipera*): Թռչուններից՝ գառնանգղ(*Gypaetus barbatus* Linnaeus), Գիշանգղ(*Neophron percnopterus* Linnaeus), Օձակեր արծիվ(*Circaetus gallicus*), Տափաստանային արծիվ(*Aquila nipalensis orientalis* Hodgson), Կարմրատտ բազե(*Falco vespertinus* Linnaeus), Բվեճ(*Bubo bub*) և այլն: Երկկենցաղներից Կանաչ դոդոշը (*Bufo viridis*), Սովորական ծառագորտը (*Hyla arborea schelkownikowi*), Լճագորտը (*Pelophylax ridibundus*) և Փոքրասիական գորտը (*Rana macrocnemis*), կաթնասուններից՝ Գորշ արջը(*Ursus arctos* Linnaeus): Ներառված է նաև Երկարտուն սցինկ- *Eumeces schneideri* տեսակը: Կարգավիճակը՝ տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver.3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես <Խոցելի> VU B1ab(iii) +2ab(iii):



Տարածաշրջանի ջրային ավազաններում հանդիպում են կարմրախայտ, քուռի բեղլու, կողակ և այլ ձկնատեսակներ: Տարածքում կարող է հանդիպել կենդանիների Կարմիր գրքում գրանցված Թամբակուրծք թարախահան-*Mylabris sedilithorax* Sumakov տեսակը:

Նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները, ինչպես նաև բացակայում են կենդանիների միգրացիոն ուղիները՝ տարածքի ուրբանացված լինելու, մարդու ազդեցության գոտում գտնվելու պատճառով: Տարածքը հիմնականում վարելահող է, ինչը ամեն տարի ենթարկվել է մարդու ազդեցությանը:

7.2.7. Բնության հատուկ պահպանվող տարածքներ.

Հայաստանի Հանրապետությունում կենսաբազմազանության պահպանումը, հիմնականում, իրականացվում է Բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ) (պետական արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր, բնության հուշարձաններ), որտեղ կենտրոնացված է բուսական և կենդանական աշխարհի տեսակազմի մոտ (60-70)%-ը, ներառյալ հազվագյուտ, վտանգված, անհետացման եզրին հայտնված և էնդեմիկ տեսակների ճնշող մեծամասնությունը:

Հայաստանի տարածքի 387 հազ. հա կամ 13%-ը բնության հատուկ պահպանվող տարածքներ են (ԲՀՊՏ)



Տարածքին ամենամոտը՝ «Արզական-Մեղրաձոր» պետական արգելավայրն է, որը ուսումնասիրվող տարածքից գտնվում է 8 կմ-ից ավել հեռավորության վրա:

«Արզական-Մեղրաձոր» պետական արգելավայրը ստեղծվել է 1971 թվականին՝ Մակերեսը՝ 13532 հա՝ կենդանական և բուսական աշխարհի հազվագյուտ տեսակների պահպանման նպատակով: Գտնվում է Մարմարիկ և Դալարիկ գետերի ավազաններում, 1600-2100մ բարձրությունների վրա: Արգելավայրի հիմնական բուսատեսակը կաղնու անտառներ են, տարածքում աճում են 800 տեսակի անոթավոր բույսեր, որոնցից 9-ը՝ գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

Գործունեության տարածքն անմիջական սահմաններ ԲՀՊՏ-ներից մեծ հեռավորությունների վրա է:

7.2.8. Պատմության և մշակութային հուշարձաններ

Մարզի տարածքում են գտնվում հազարից ավելի պատմամշակութային օբյեկտներ՝ եկեղեցական համալիրներ, եկեղեցիներ, մատուռներ, տուն-թանգարաններ:

Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշման(հավելված7)՝ Հրազդան քաղաքի և Ջրառատ գյուղի վարչական տարածքների համար սահմանվում է հուշարձանների հետևյալ ցանկը.

ՀՐԱԶԴԱՆ քաղաք

Հուշարձանի համարը		Հուշարձանի ենթահամարը (ենթահամարները)		Հուշարձանախումբը, հուշարձանը	Ժամանակը	Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն	Նշանակությունը (համապատասխանում/չ համապատասխանում)	Ծանոթագրություն ²
1	2	3	4	5	6	7	8	
1			ԱՄՐՈՑ	Ք.ա. 2-1 հազ.	քաղաքից 2.5 կմ հվ- աե, Բերդի դար սարի գագաթին	<	1	
	1.1		Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ.	ամրոցի ամ ստորոտին	<	1.1	
2			ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	12-14 դդ.	Մաքրավանքի համալիրից հս-ամ, սարավանջին	<	59.8: Ենթակայու- թյամբ ներկայաց- ված է 16 հուշար- ձան (59.8.1- 59.8.16)	
3			ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	12-19 դդ.	Կաքավաձոր թաղամասի Սբ. Աստվածածին եկեղեցու մոտ	<	15.5: Ենթակայու- թյամբ ներկայաց- ված է 3 հուշարձան (15.5.1-15.5.3)	
4			ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	13-20 դդ.	Կաքավաձոր թաղա- մասի ամ մասում, բարձունքի վրա, մատուռի շուրջը	S	3: Ենթակայու- թյամբ ներկայաց- ված է ևս 1 հուշարձան (3.2)	
	4.1		Մատուռ	16-17 դդ.		S	3.1: Ենթակայու- թյամբ ներկայաց- ված է 2 հուշարձան (3.1.1- 3.1.2)	

² Սույն պետական ցուցակի «Ծանոթագրություն» սյունակում (8-րդ) նշված են 4-րդ սյունակում ներկայացված հուշարձանների և ենթահուշարձանների համարները՝ պետական ցուցակի (կրճատ՝ պետ. ցուցակ) համաձայն: Անհրաժեշտության դեպքում ներկայացվում է նաև լրացուցիչ տեղեկատվություն հուշարձանի առանձին հատկանիշների (տեղ, վիճակ, բնութագրական օբյեկտների առկայություն և այլն) մասին: Պետական ցուցակն օտարման ոչ ենթակա այլ ենթահուշարձանների (խաչքար, տապանաքար և այլն) անվանումներով չձանրաբեռնելու նպատակով ծանոթագրության մեջ ներկայացվում են նաև դրանց քանակական տվյալները և պետական ցուցակի ենթահամարները:

5		ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	13-20 դդ.	Վանատուր թաղամասում, Երկրորդ աշխարհամարտում զոհվածների հուշարձանի մոտ	<	5: Ենթակայությանը ներկայացված է 5 հուշարձան (5.1-5.5)
6		ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	միջնադար	Մաքրավան թաղամասում, Մաքրավանքից 700-800 մ հս-աե	S	4: Ենթակայությանը ներկայացված է 1 հուշարձան (4.1)
7		ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	միջնադար 19-20 դդ.	Աղբյուրակ թաղամասի հվ-աե եզրին	S	2
8		ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	12-15 դդ.	Կաքավաձոր թաղամասից 2 կմ հվ-աե, «Զիարաթ» վայրում	S	7
	8.1	Գերեզմանոց	12-15 դդ.		S	7: Ենթակայությանը ներկայացված է 2 հուշարձան (7.1.1-7.1.2)
9		ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	գարգացած միջնադար	Վանատուր թաղամասից Թեղենիս սար տանող ճանապարհի երկու կողմում	<	10
	9.1	Գերեզմանոց	10-17 դդ.	գյուղատեղիում	<	10.1: Ենթակայությանը ներկայացված է 12 հուշարձան (10.1.1-10.1.12)
10		ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	միջնադար	Մաքրավան թաղամասում, «Սարի տակի խարաբեք» վայրում, Ծաղկաձորից 6 կմ ամ	S	8
	10.1	Մատուռ	միջնադար		S	8.1: Ենթակայությանը ներկայացված է 1 հուշարձան (8.1.1)
	10.2	Գերեզմանոց	միջնադար		S	8.2: Ենթակայությանը ներկայացված է 14 հուշարձան (8.2.1-8.2.14)

11		ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	միջնադար	քաղաքից 3 կմ հվ-աե, «Չամանգյուլ» վայրում	S	9
	11.1	Գերեզմանոց	ուշ միջնադար		S	9.2: Ենթակայությանը ներկայացված է 6 հուշարձան (9.2.1-9.2.6)
	11.2	Եկեղեցի Սբ. Ամենափրկիչ	միջնադար		S	9.1: Ենթակայությանը ներկայացված է 7 հուշարձան (9.1.1-9.1.7)
12		ԴԱՄԲԱՐԱՆԱՂԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	քաղաքից 5 կմ հվ-աե	<	11
13		ԴԱՄԲԱՐԱՆԱՂԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	քաղաքից 10 կմ հվ-աե	<	12
14		ԵԿԵՂԵՑԻ	10-12 դդ.	Աղբյուրակ թաղամասում, բլրի վրա	<	13: Ենթակայությանը ներկայացված է ևս 8 հուշարձան (13.1-13.8)
	14.1	Գերեզմանոց	9-17 դդ.	Եկեղեցու շուրջը	<	13.9: Ենթակայությանը ներկայացված է ևս 15 հուշարձան (13.9.1-13.9.15)
	14.1.1	Խաչքար «Կապույտ Խաչ»	9 դդ.	Ա. Խաչատրյանի տնամերձ հողամասում	<	13.9.1
15		ԽԱՉՔԱՐ	9-10 դդ.	Մաքրավան թաղամասից 2.5 կմ հվ, նորաշեն մատուռում	<	17
16		ԽԱՉՔԱՐ	9-10 դդ.	Ուխտորդի մոտ	<	18
17		ԽԱՉՔԱՐ	9-10 դդ.	Վանատուր թաղամասի հս եզրին, բլրագագաթին, նորաշեն Սբ. Խաչ մատուռում	<	19
18		ԽԱՉՔԱՐ	10 դդ.	Շահումյան փող. 120, նորաշեն մատուռում	<	20

19		ԽԱՉՔԱՐ	10 դ.	քաղաքի հվ մասում, Խ. Հարությունյանի տնամերձ հողամասում	<	21
20		ԽԱՉՔԱՐ	10-11 դդ.	Մաքրավան թաղամասում, Մարգարյանների տան մոտ	<	22
21		ԽԱՉՔԱՐ	11 դ.	նախորդի մոտ	<	23
22		ԽԱՉՔԱՐ	11 դ.	նախորդի մոտ	<	24
23		ԽԱՉՔԱՐ	11 դ.	Մաքրավանքից 1.5 կմ հվ-ամ	<	25
24		ԽԱՉՔԱՐ	11 դ.	քաղաքից 1 կմ հվ-աե, «Չիմնի» վայրում	<	26
25		ԽԱՉՔԱՐ	11-12 դդ.	քաղաքի ամ մասում	<	27
26		ԽԱՉՔԱՐ	11-12 դդ.	քաղաքի ամ մասում	<	28
27		ԽԱՉՔԱՐ	11-12 դդ.	քաղաքի ամ մասում, Ֆ. Հարությունյանի տնամերձ հողամասում	<	29
28		ԽԱՉՔԱՐ	12 դ.	Մաքրավան թաղամա- սից հս-ամ, սարալանջին	<	31
29		ԽԱՉՔԱՐ	12 դ.	Մաքրավան թաղամա- սի նորաշեն մատուռում	<	32
30		ԽԱՉՔԱՐ	12 դ.	քաղաքի մեջ, թիվ 4 դպրոցի մոտ, 19-20 դդ. գերեզմանոցում	S	6.1
31		ԽԱՉՔԱՐ	12-13 դդ.	քաղաքից 1 կմ հվ-աե, «Չիմնի» վայրում	<	30
32		ԽԱՉՔԱՐ	12-13 դդ.	Մաքրավանքից մոտ 150 մ հս-ամ, Յավրյանների տան մոտ	<	33

33	ԽԱՉՔԱՐ	12-13 դդ.	Վանատուր թաղամասի հվ մասում, Խ. Հարությունյանի տնամերձ հողամասի նորաշեն սրբատեղիում	<	34
34	ԽԱՉՔԱՐ	13 դ.	Վանատուր թաղամաս տանող ճանապարհի աջ կողմում, գետափին	S	35
35	ԽԱՉՔԱՐ	13 դ.	Մաքրավանքից մոտ 150 մ հս-ամ, Մարգարյանների տան մոտ	<	36
36	ԽԱՉՔԱՐ «ՍՐԲԻ ՔԱՐ»	13 դ.	Մաքրավանք տանող ճանապարհի ձախ կողմում, աղբյուրի մոտ	<	37
37	ԽԱՉՔԱՐ	13 դ.	Մաքրավանք տանող ճանապարհի ձախ կողմում, աղբյուրի մոտ	<	38
38	ԽԱՉՔԱՐ	13-14 դդ.	Մաքրավանք տանող ճանապարհի ձախ կողմում, աղբյուրի մոտ	<	40
39	ԽԱՉՔԱՐ	13-14 դդ.	Աղբյուրակից Բջնի տանող ճանապարհի մոտ, սարի գագաթին, բարձր լարման էլ. հոսանքի աշտարակից 20 մ աե, արտերի մեջ	<	41
40	ԽԱՉՔԱՐ	14-15 դդ.	քաղաքից 1 կմ հվ-աե, «Չիմնի» վայրում	<	42
41	ԽԱՉՔԱՐ	14-15 դդ.	քաղաքից 5 կմ հվ-աե, «Ջոմմե» վայրում	<	43
42	ԽԱՉՔԱՐ	15 դ.	Կաքավաձոր թաղամասից 1 կմ հվ	<	44
43	ԽԱՉՔԱՐ	15 դ.	Մաքրավանք տանող ճանապարհի ձախ կողմում, աղբյուրից մոտ 20 մ հվ-ամ, ծառի տակ	S	45

44		ԽԱՉՔԱՐ	15 դ.	Շահումյան փող. 120, նորաշեն մատուռում	<	46
45		ԽԱՉՔԱՐ	1557 թ.	քաղաքից 10 կմ հվ, «Կարմիր դար» սարի գագաթին	<	47
46		ԽԱՉՔԱՐ	միջնադար	քաղաքի մեջ, Սբ. Խաչ եկեղեցուց հվ, Վ. Ասատրյանի տան մոտ	<	48
47		ԽԱՉՔԱՐ ԳՐԻԳՈՐԻ	13 դ.	Մաքրավանք տանող ճանապարհի ձախ կողմում, աղբյուրից մոտ 20 մ հվ-ամ	<	39
48		ՀՈՒՇԱՂԲՅՈՒՐ	1957 թ.	քաղաքի մեջ	S	49
49		ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1975 թ.	Կաքավաձոր թաղամասում, եկեղեցուց հս	S	50
50		ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1989 թ.	Ներքին Աղբյուրակ թաղամասում	S	51
51		ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1985 թ.	Վանատուր թաղամասում	<	52
	51.1	Գերեզմանոց Արցախում գրհված ազատամարտիկների	1992-2001 թթ.		S	52.1
52		ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1981 թ.	քաղաքային զբոսայգում	<	53
53		ՄԱՏՈՒՌ	18-19 դդ., վրկնգ.՝ 20 դ.	Կաքավաձոր թաղամասի հս մասում	<	54
54		ՄԱՏՈՒՌ	միջնադար, վրկնգ.՝ 20 դ.	քաղաքի Սբ. Խաչ եկեղեցուց հվ, Մ. Ավետիսյանի տան մոտ	<	55: Ենթակայությանը ներկայացված է 6 հուշարձան (55.1-55.6)

55		ՄԱՏՈՒՌ		Մաքրավանքից 100 մ ամ, բլրակի վրա, Ասատրյանների տան մոտ	S	59.4: Ենթակայությունը ներկայացված է նաև նախասրահ (59.4.1)
	55.1	Գերեզմանոց		մատուռի մոտ	S	59.4.2
56		ՄԱՏՈՒՌ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ	վրկռ.՝ 1915 թ.	Կաքավաձոր թաղամասի ամ մասում	S	56
	56.1	Գերեզմանոց	12-20 դդ.		S	56.1: Ենթակայությունը ներկայացված է 3 հուշարձան (56.1-56.3)
57		ՄԱՏՈՒՌ «ԿԱՊՈՒՅՏ ԽԱԶ»	9 դ.	Վանատուր թաղամասում, շրջապարսպի մեջ	<	հիմնովին վերաշինված 1990-ական թթ. (58)
	57.1	Գերեզմանոց	9-13 դդ.	մատուռի մոտ	<	58.1: Ենթակայությունը ներկայացված է 22 հուշարձան (58.1.1-58.1.22)
58		ՄԱՏՈՒՌ «ՎԵՐԻՆ ՎԱՆՔ»	4-7 դդ.	Կաքավաձոր թաղամասից մոտ 1 կմ հս	<	57: Ենթակայությունը ներկայացված է ևս 1 հուշարձան (57.1)
	58.1	Գերեզմանոց		մատուռի մոտ	S	57.2: Ենթակայությունը ներկայացված է 3 հուշարձան (57.2.1-57.2.3)
59		ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՍԲ. ՍՏԵՓԱՆՈՍ	10-14 դդ.	Աղբյուրակ թաղամասից 3-4 կմ հս-ամ, անտառում	<	60
	59.1	Գերեզմանոց	10-17 դդ.	Եկեղեցու մոտ	<	60.2: Ենթակայությունը ներկայացված է 2 հուշարձան (60.2.1-60.2.2)

	59.2		Եկեղեցի Սբ. Ստեփանոս	10-12 դդ.		<	60.1: Ենթակայությանը ներկայացված է 2 հուշարձան (60.1.1-60.1.2)
60			ՔԱՆԴԱԿ	1975 թ.	քաղաքի մեջ, հանրախանութի դիմաց	S	61
61			ՔԱՆԴԱԿ	20 դ.	քաղաքային զբոսայգում	S	62
62			ՔԱՆԴԱԿ «ՆԺՈՒՅԳ»	20 դ.	քաղաքային զբոսայգում	S	63
63			ՔԱՐԱՎԱՆԱՏՈՒՆ	13 դ.	Վանատուր թաղամասում, Վ. Բարսեղյանի տան մոտ	<	64

ԶՐԱՈՍ օյուղ

1	2	3	4	5	6	7	8
1			ԱՄՐՈՑ «ԴԱՐԻ ԳԼՈՒԽ»	Ք.ա. 8-6 դդ.	օյուղից 2.5 կմ ամ, «Կլոր դար» բլրի գագաթին	<	1
2			ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	9-19 դդ.	օյուղի մեջ, Սբ. Կարապետ եկեղեցու մոտ	<	10.1: Ենթակայությանը ներկայացված է 14 հուշարձան (10.1.1-10.1.14)
3			ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	12-20 դդ.	օյուղից աե, բարձունքի վրա	S	2: Ենթակայությանը ներկայացված է 3 հուշարձան (2.1-2.3)
4			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	միջնադար	օյուղից 2.5 կմ հս-ամ	S	3
	4.1		Գերեզմանոց	միջնադար		S	3.2
	4.2		Եկեղեցի	միջնադար		S	3.1
5			ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	11-18 դդ.	օյուղից 7-8 կմ ամ, «Մամանի դոշ» վայրում	S	4

	5.1	Գավիթ	միջնադար		S	4.2
	5.2	Գերեզմանոց	11-18 դդ.		S	4.3: Ենթակայությանը ներկայացված է 4 հուշարձան (4.3.1-4.3.4)
	5.3	Եկեղեցի	միջնադար		S	4.1
6		ՂԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2 հազ.	գյուղից 1.5 կմ ամ, «Կաթնաղբյուր» վայրում	<	5
7		ՂԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 5 կմ հս-ամ, Թեղենիս տանող ճանապարհի ձախ կողմում	<	6
8		ՂԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	ճոպանուղու վերջնակայարանի շրջանում	<	7
9		ԵԿԵՂԵՑԻ	12-13 դդ.	գյուղից 2.5 կմ ամ	<	8
	9.1	Գերեզմանոց	միջնադար		S	8.1: Ենթակայությանը ներկայացված է 4 հուշարձան (8.1.1-8.1.4)
10		ԵԿԵՂԵՑԻ	միջնադար	գյուղից 3 կմ ամ	S	9
	10.1	Գերեզմանոց	միջնադար		S	9.1: Ենթակայությանը ներկայացված է 1 հուշարձան (9.2)
11		ԵԿԵՂԵՑԻ «ՍԵՓՈՅԻ ՎԱՆՔ»	միջնադար	գյուղի մեջ	S	11: Ենթակայությանը ներկայացված է 3 հուշարձան (11.1.1-11.1.3)
	11.1	Գերեզմանոց	19 դ.		S	11.4
12		ԽԱՉՔԱՐ	13 դ.	գյուղում, N 109 տան բակում	<	12
13		ՀՈՒՇԱՐԶԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՋՈՀԿԱԾՆԵՐԻՆ	1973 թ.	գյուղի աե մասում, բարձունքի վրա	S	13

14		ՄԱՏՈՒՌ ԹՈՒՆ ՄԱՆՈՒԿ		գյուղի առ մասում	<	14: Ենթակայությանը ներկայացված է 5 հուշարձան (14.1-14.5)
15		ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ	քարի դար	գյուղից 5 կմ հս-ամ	<	15

7.2.9. Բնության հուշարձաններ.

Կոտայքի մարզը հարուստ է բնական հուշարձաններով: ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն՝ մարզում կան 33 բնության հուշարձաններ, որից 20-ը՝ երկրաբանական, 5-ը՝ ջրաերկրաբանական, 4-ը՝ ջրագրական, 1-ը՝ բնապատմական և 3-ը՝ կենսաբանական: Բնական հուշարձանների մի մասն ունի հատուկ պահպանվող տարածքների կարգավիճակ:

Կոտայքի մարզի Բնության հուշարձանների ցանկը

	Երկարաբանական հուշարձաններ	
1.	«Անանուն» խզվածքներ	Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից հվ, ավազահանքի մոտ
2.	Թագավորանիստ խարամային կոնի պեմզաների և խարամների կոնտակտ	Կոտայքի մարզ, Եղվարդ քաղաքից 3.5 կմ դեպի հարավ 33. «Թագավորանիստ» խարամային կոն Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից 3 կմ հվ, Աշտարակ տանող խճուղու ձախ կողմում
3.	«Թագավորանիստ» խարամային կոն	Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից 3 կմ հվ, Աշտարակ տանող խճուղու ձախ կողմում
4.	Պեռլիտե փիղ» քարե քանդակ	Կոտայքի մարզ, Չարենցավան քաղաքից 2 կմ հվ, քարահանքի մոտ
5.	«Անանուն» բյուրեղային թերթաքարերի ու վերին կավճի կրաքարերի կոնտակտ	Կոտայքի մարզ, Բջնի գյուղի արևմտյան ծայրամասում
6.	Ծակ քար» բնական թունել	Կոտայքի մարզ, Բջնի գյուղի մատույցներում, Հրազդան գետի ձախ ափին
7.	Բազալտե երգեհոն» սյունաձև բազալտներ	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
8.	«Անանուն» քարայր սյունաձև բազալտներում	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1,0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
9.	«Անանուն» լանջային երոզիա	Կոտայքի մարզ, Ազատ գետի աջակողմյան ափերին
10.	«Անանուն» լավային ծալքեր	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
11.	«Անանուն» խորշեր	Կոտայքի մարզ, Գողթ գյուղից մոտ 3.0 կմ հս-արլ

12.	«Հատիս» հրաբուխ	Կոտայքի մարզ, Զովաշեն գյուղից 2.0 կմ արմ
13.	«Ավազան» հրաբխային գմբեթ Կարենիս գյուղից 1.5 կմ հս-ար	Կոտայքի մարզ, Կարենիս գյուղից 1.5 կմ հս-ար
14.	«Կարենիս» հրաբխային գմբեթ	Կոտայքի մարզ, Կարենիս գյուղից 0.5 կմ հս-ար
15.	«Անանուն» ապարների բնորոշ մերկացում	Կոտայքի մարզ, Նուռնուս գյուղի և Արգելի ՀԵԿ-ի միջև
16.	«Անանուն» օբսիդիանի ելքեր	Կոտայքի մարզ, Ջրաբեր գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, Երևան-Սևան խճուղու աջ կողմում
17.	«Անանուն» քարե կուտակումներ	Կոտայքի մարզ, Քաղսի գյուղի հվ-արմ եզրին, Հրազդանի կիրճում
18.	«Գութանասար» հրաբուխ	Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 3 կմ հվ
19.	«Լեռնահովիտ» քարային կուտակումներ	Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 4-5 կմ հվ-արլ, «Թեզխարաբ» գյուղատեղիի մոտ
20.	Ձորաղբյուրի (Մանգյուսի) բրածո ֆլորա	Կոտայքի մարզ, գյուղ Ձորաղբյուր
	Ջրաերկրաբանական հուշարձաններ	
1.	«Հաղարտանք» աղբյուր	Կոտայքի մարզ, Հրազդան քաղաքի Վանատուր (Աթարբեկյան) թաղամասի արլ ծայրամասում, 1.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1755 մ բարձրության վրա
2.	«Համով» աղբյուր	Կոտայքի մարզ, Ակունք գյուղի հվ-արմ ծայրամասում, եկեղեցու մոտ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա
3.	«Քաղցր» աղբյուր	Կոտայքի մարզ, Արգնի գյուղից 150 մ հվ-արմ, Հրազդան գետի ձախ ափին, ծ.մ-ից 1300 մ բարձրության վրա
4.	«Ձորի» աղբյուր	Կոտայքի մարզ, Գողթ գյուղից 0.3 կմ հս-արլ, Գողթ գետի աջ ափին, ծ.մ-ից 1580 մ բարձրության վրա
5.	«Ավազան» աղբյուր	Կոտայքի մարզ, Կաթնաղբյուր գյուղից 0.3 կմ հս-արլ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա
	Ջրագրական հուշարձաններ	
1.	«Սազերի» լիճ	Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4 կմ հս
2.	«Վիշապա» լիճ	Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4 կմ արլ
3.	«Բազմալիճք» լիճ	Կոտայքի մարզ, Սևաբերդ գյուղից մոտ 3 կմ հս
4.	«Լուսնալիճ» լիճ	Կոտայքի մարզ, Սևաբերդ գյուղից մոտ 7 կմ հս-արլ
	Բնապատմական հուշարձաններ	
1.	«Ողջաբերդ» բնապատմական համալիր	Կոտայքի մարզ, Ողջաբերդ գյուղի հս-արլ մասում
	Կենսաբանական հուշարձաններ	

1.	«Ռեիլկտային կրկես Քյորոլի լեռան մոտ»	Կոտայքի մարզ, Արտավազ գյուղի մոտ
2.	«Ալպյան գորգ»	Կոտայքի մարզ, Մեղրաձոր-Ֆիոլետովո գրունտային ճանապարհի ամենաբարձր մասում (Փամբակ լեռնաշղթայի Ամպա-սարի գագաթային մասում, ծ.մ-ից 300 մ բարձրության վրա
3.	«Թանթրվենի, Տիգրանի»	Կոտայքի մարզ, Արզնի առողջարանի մոտ, Հրազդան գետի ափին, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա

7.2.10. Սոցիալ-տնտեսական.

Կոտայքի մարզը գտնվում է ՀՀ տարածքի կենտրոնում և միակ մարզն է, որը միջպետական սահման չունի ՀՀ հարևան որևէ պետության հետ: Այն հարավ-արևմուտքից սահմանակից է մայրաքաղաքին, արևմուտքից՝ Արագածոտնի, հյուսիսից՝ Լոռու, հյուսիս-արևելքից՝ Տավուշի, արևելքից՝ Գեղարքունիքի և հարավից՝ Արարատի մարզերին: Մարզի մակերեսը կազմում է 2076 կմ²: Ներառում է 11 համայնք, 7 քաղաքային և 61 գյուղական բնակավայրեր: Մարզկենտրոնը Հրազդան քաղաքն է:

ԿՈՏԱՅԻ ՄԱՐԶ KOTAYK MARZ



Մարզկենտրոնը ՀՐԱԶԴԱՆ
 7 քաղաք, 61 բնակավայր
 Մարզային նշանակության
 ճանապարհների
 երկարությունը՝ 264կմ
HRAZDAN the center
 7 cities 61 settlements
 Instate roads 264 km

Մարզի բնակչությունը 2025թ. տարեկզբի դրությամբ կազմում է 293,3 հազ. մարդ: Ազգաբնակչությունը հիմնականում հայեր են՝ 97,6%: Ազգային փոքրամասնություններից ապրում են՝ եզդիներ, ասորիներ, ռուսներ, քրդեր:

Տարածքը Territory	2 076 քառ.կմ/ sq. km
Հայաստանի Հանրապետության տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը, % Territory share of the marz in the territory of the Republic of Armenia, %	7,8
Ընտանիքներ, 2025 թ. տարեկզբի դրությամբ Communities, as of the beginning of 2025	11
Քաղաքներ Towns	7
Գյուղեր Villages	61
Բնակչության թվաքանակը, 2025թ. տարեկզբի դրությամբ Population number as of the beginning of the year, 2025	293,3 հազ.մարդ/ tho. person
այդ թվում/ including:	
քաղաքային urban	160,8 հազ.մարդ/ tho. person
գյուղական rural	132,5 հազ.մարդ/ tho. person
Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության բաժնի տեսակարար կշիռը 2024թ. % Share of marz population in the total population of the Republic of Armenia 2024, %	9,5
Քաղաքային բնակչության բաժնի տեսակարար կշիռը 2024թ. % Share of urban population size 2024, %	54,8
Գյուղատնտեսական նշանակության հողեր, 2023թ. հուլիսի 1-ի դրությամբ Agricultural land, as of July 1, 2023	153 762,4 հա/ ha
այդ թվում՝ վարելահողեր, 2023թ. հուլիսի 1-ի դրությամբ including: arable land, as of July 1, 2023	36 682,2 հա/ ha

Կոտայքի մարզը համեմատաբար զարգացած ու բազմաճյուղ տնտեսություն ունեցող մարզերից է: Մարզը հարուստ է օգտակար հանածոների՝ ոսկու, պղինձի, մոլիբդենի, ալյումինի, երկաթի, պերլիտի, մարմարի, գրանիտի, լիթոիդային պեմզայի, նեֆելենային սիենիտների, անդեզիտի, հրաբխային խարամների, պեռլիտների, մարմարի, տրավերտինի, բազալտի, քարաղի, զանազան շինարարական նյութերի և հանքային ջրերի 3 խոշոր հանքավայրերով (Հանքավան, Բջնի, Արզնի): Զարգացած է սննդամթերքի, մետաղական և ոչ մետաղական հանքարդյունաբերության, ցեմենտի արտադրության, էլեկտրաէներգիայի արտադրության ուղղությամբ:

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողն մշակող արդյունաբերությունն է, որը ներառում է՝ սննդամթերքի և խմիչքների արտադրություն (մսի և մսամթերքի մշակում և պահածոյացում, մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում, կաթնամթերքի, ալյուրի, խմիչքների արտադրություն, ծխախոտային արտադրատեսակների արտադրություն), ոչ մետաղական հանքային այլ արտադրատեսակների արտադրություն (ապակու և ապակե արտադրատեսակների արտադրություն, ցեմենտի արտադրություն), հիմնական մետաղների արտադրություն, (թուջի, պողպատի և ֆեռոհամահալվածքների արտադրություն), ոսկերչական արտադրատեսակների, ոչ թանկարժեք զարդերի արտադրությունը: Զարգացած է էներգետիկան:

Մարզի գյուղնշանակության հողերը համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեի կայք էջի՝

գյուղնշանակության հողերը կազմում են 153,762,4հա, որից վարելահողերը՝ 36,682,2հա: Մարզի գյուղատնտեսությունը մասնագիտացած է թռչնաբուծության մեջ: Գյուղատնտեսության տեսակետից մարզը բնութագրվում է որպես կաթնասնասնապահական, հացահատիկային ոլորտ: Մարզի տարածքում են գործում հանրապետության 3 խոշոր թռչնաֆաբրիկաներ: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային, երկաթուղային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով: Մարզի տարածքի կենտրոնական մասով անցնում են երկրի համար առանցքային նշանակություն ունեցող Երևան-Հրազդան-Սևան ավտոմայրուղին և Երևան-Հրազդան-Իջևան երկաթգիծը:

2024թ.-ին մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 10.6 %
- գյուղատնտեսություն 8.7 %
- շինարարություն 10.4 %
- մանրածախ առևտուր 3.7 %
- ծառայություններ 3.7 %:

Մարզի գյուղատնտեսության ոլորտի հիմնական ուղղություններն են՝ բուսաբուծությունը և անասնապահությունը:

Հրազդան համայնք. Հրազդանի տարածաշրջանում են գտնվում նախկին արդյունաբերական քաղաքներ՝ Հրազդանը, Չարենցավանը, հանգստյան ու առողջարանային քաղաք՝ Ծաղկաձորը: Գյուղական համայնքներն են՝ Ալափարս, Աղավնաձոր, Արզական, Արտավազ, Բջնի, Լեռնանիստ, Կարենիս, Հանքավան, Մարմարիկ, Մեղրաձոր, Սուլակ, Ջրառատ, Քաղսի, Ֆանտան: Համայնքում աշխատատեղերի բացակայության պատճառով գործազրկության մակարդակը բարձր է: Գործազուրկների հիմնական մասը կանայք են, տղամարդկանց աշխատունակ մասը գնում է արտագնա աշխատանքի:

Հրազդան համայնքն ապահովվված է ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերով, որոնց հիմնական մասը գտնվում է անմխիթար վիճակում: Համայնքը հիմնականում գազիֆիկացված է(99%):

Համայնքում կոշտ կենցաղային թափոնների կառավարումը կատարվում է «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրով»: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր՝ Հրազդան համայնքում գտնվող տարածաշրջանային աղբավայր:

Համայնքում առկա են դպրոցներ, նախակրթարաններ, երաժշտական, կերպարվեստի դպրոցներ, մարզադպրոցներ, գրադարաններ, կինոթատրոն, կուլտուրայի տուն, հիվանդանոց, առևտրի և սպասարկման հիմնարկներ, գործում է կաթի, հացի գործարաններ: Համայնքն ունի զբոսայգի, հանգստի գոտիներ:

Հրազդան քաղաք. Գտնվում է Հրազդան գետի վերին հոսանքի ձախ ափին: Հրազդան քաղաքը մարզի մարզկենտրոնն է, հեռավորությունը Երևանից 50 կմ է: Աշխարհագրական դիրքով Հրազդան քաղաքը տեղակայված է Հրազդան գետի վերին և միջին ավազանում՝ Փամբակի, Ծաղկունյաց և Գեղամի լեռնաշղթաներով՝ պատված թույլ մասնատված լավային ծածկույթով: Միջբլուրային տարածքները ծածկված են դելուվիալ ապարների շերտով:

Տարածքի մեծ մասն ունի 1500-2400 մ բարձրություն: Առավելագույն բարձր կետը Թեժ լեռան կատարն է՝ 3101մ: Հյուսիսում ձգվում են Մարմարիկի վտակներով խիստ մասնատված Փամբակի լեռնաշղթայի լանջերը, արևելքում՝ Գեղամա լեռնաշղթայի հյուսիս-արևմտյան լեռնաճյուղերն ու լավային հոսքերը: Հարավ-արևելքում բարձրանում են Գութանասար, Մենակսար հրաբխային կոները:

Քաղաքը հայտնի է որպես արդյունաբերական կենտրոն: Այստեղ է գտնվում Հրազդանի ՋԷԿ-ը. Աթարբեկյանի և Գյումուշի հիդրոէլեկտրակայանները:

Արդյունաբերության մյուս ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (մասնավորապես՝ ցեմենտի արտադրություն): Քաղաքն ունի 1 դրամատիկական թատրոն, 1 պատկերասրահ, 2 թանգարան, 8 գրադարաններ, 1 մասնավոր ԲՈՒՀ, 2 ուսումնարան, 2 քոլեջ, 13 հանրակրթական, 1 ավագ և 1 հատուկ դպրոցներ, 13 մուր-մանկապարտեզներ, 2 սպորտային, 2 երաժշտական, 2 մանկական արվեստի դպրոցներ, քաղաքապետարանի մանկապատանեկան ստեղծագործական, մշակույթի և երիտասարդական մարզամշակութային ուսումնական կենտրոններ, ձմեռային մարզաձևերի, մանկապատանեկան մարզադպրոցներ:

Հրազդան քաղաքի բնակչությունը 2025թ. տարեսկզբին կազմում է 49.5 հազար մարդ:

8. Նախատեսվող գործունեության բնութագիրը շինարարության շահագործման, փակման և հետփակման փուլերում(արտադրական հզորություններ, օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ).

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է «ՖԱՅՐԲԸՐԴ ԷՅԱՅ» ՓԲԸ-ի կողմից, Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, ք.Հրազդան 20 հասցեում՝ 58130մ² մակերեսի վրա: Գործունեությունն իրականացվելու է փուլերով:

8.1. Շինարարության փուլ.

Շինարարական աշխատանքները կազմակերպվելու են երկու փուլով՝ նախապատրաստական և հիմնական: Նախապատրաստական փուլում կատարվելու են հետևյալ աշխատանքները.

- Շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում:
- Ժամանակավոր էլեկտրամատակարարում:
- Շինհրապարակի գիշերային լուսավորություն:
- Կենցաղային, գրասենյակային ժամանակավոր շինության տեղադրում:
- Շինմեքենաների լվացման կետի տեղադրում:
- Տեղեկատվական ցուցանակի տեղադրում/շինությունների եռաչափ պատկերով/:

Նախապատրաստական աշխատանքները տևելու են 0.5 ամիս:

Շինարարական հրապարակ. շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախատեսվում է հետևյալ աշխատանքները.

- հողային աշխատանքներ,
- հիմքերի բետոնացում,
- կարկասի կաղապարամածի պատրաստում,
- ե/բ ծածկի իրականացում,
- պատուհանների տեղադրում, հարթ տանիքի իրականացում,
- երեսապատում,
- ներքին հարդարման աշխատանքներ,
- տարածքի բարեկարգում,
- նախագծով նախատեսված կառուցման այլ աշխատանքներ :

Շինարարական աշխատանքների իրականացման համար նախատեսվող շինհրապարակի ամբողջ տարածքն է՝ 58130մ², որից ջրցանվող մակերեսը կազմելու է մոտ 7000մ²:


Շին. հրապարակում լինելու են աշխատողների համար ժամանակավոր շինություններ.

- պահակակետ
- գրասենյակ
- հանդերձարան
- ճաշարան
- բիոզուգարան՝ 4 հատ
- փակ պահեստ
- ավտոմեքենաների, մեխանիզմների կայանման, առասանման ճոպանների տեղակայման վայրեր,
- ջրի պահուստային բաք՝ 20տ,
- հակահրդեհային վահանակ, հիդրատ՝ 2հատ,
- աղբի տարաներ՝ 7 հատ,
- շինհրապարակում լինելու են նաև 1 հատ 7,30 x 3 մ չափերի ավտոմեքենաների անիվների լվացման կետ:


Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ և լուսային ազդանշանային համակարգով: Տեղադրվելու են 20 հատ լուսարձակներ:

Շինհրապարակում նախատեսված է շինարարական աղբի պահման տարածքը:

Շինհրապարակի կազմակերպման հատակագիծը



**ՇՐՆՀՐԱԳՐԱԿԻ ԱՍԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ
Մ-ԻՆ ՓՈԼ ՀԻՄՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**



Շինարարության ժամանակ նախատեսվող ժամանակավոր պահեստներն, ինչպես նաև աշխատողների համար նախատեսվող ճաշարանը, հանդերձարանը, գրասենյակը, պահակատունը տեղադրվելու են տարածքում՝ ժամանակավոր վագոն տնակներում:

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում, որի համար նախատեսված է անիվների լվացման հարթակ՝ լվացման սարք: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման սարքի միջով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ: Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած, ինչպես նաև շինարարական հոսքաջրերը ներսի բակային ջրահեռացման ցանցով հեռացվում են դեպի բիոզուգարաններ: Իսկ անձրևաջրերից առաջացող հոսքաջրերը բնական ջրահեռացման՝ դրենաժային համակարգի միջոցով հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող համապատասխան տարողության պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի շինարարական աշխատանքների ժամանակ արտադրական հրապարակի ջրցանման և անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

Շինարարական նյութերը պահեստավորվելու են շինհրապարակում:

Հրդեհաշիջման համակարգ. շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվելու են «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին»-ի կողմից տրված հրահանգներով: Շինարարական հրապարակում տեղադրվելու է հակահրդեհային վահանակ, հակահրդեհային հիդրատներ՝ 2 հատ: Շինարարության փուլում տեղադրվելու է նաև 20 տոննա տարողության ջրի բաք՝ հրդեհամարման, ջրցանի նպատակով:

Շինհրապարակը ցանկապատվելու է, համաձայն նախագծի՝ տեղադրվելու է ժամանակավոր, 2300մ² բարձրության ձևավոր մետաղաթիթեղով՝ դարպասով ցանկապատ: Ցանկապատի արտաքին մասում տեղադրվելու է տեղեկատվական պաստառ, որի վրա լինելու է տեղեկատվություն՝ Կառուցապատողի, գլխավոր Կապալառուի, ճարտարապետահատակագծային առաջադրանքի, շինթույլտվության, հսկող մարմինների վերաբերյալ:

Շինհրապարակն ապահովված է լինելու՝ նաև կենցաղային աղբամաններով, էլեկտրականությամբ, գիշերային լուսավորությամբ՝ 2 լյուքսից ոչ պակաս:

Բոլոր տիպի շին-մոնտաժային աշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Հողային աշխատանքներ. Գործունեության ընթացքում կատարվելու է ընդհանուր 14263մ³ ծավալի հողային աշխատանքներ: Տարածքում առկա է բուսահող:

ԱԲ կենտրոնի կառուցման աշխատանքներից կատարվելու է 16800մ³ ծավալի հողային աշխատանքներ, որից 2537 մ³ բուսահող: Հանվող 14263մ³ հողային զանգվածից 1650մ³ կատարվելու է հետ լիցք, մնացած 12613 մ³ ծավալի հողային զանգվածը կուտակվելու և պահվելու է տեղում՝ շինարարության ընթացքում հետագա օգտագործման՝ տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով:

Հողային զանգվածն առաջանալու է շենքի հիմքերի, խրամուղիների փորման, ներտարածքային ճանապարհների կառուցման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման համար նախատեսվող աշխատանքներից:

Հողային աշխատանքները կատարվելու են էքսկավատորով և ձեռքի պարզագույն

գործիքներով/բահ/: Հողային և հիմնային, տանիքի, հատակների հարդարման, ինչպես նաև լրող և պատող կոնստրուկցիաների շին մոնտաժային աշխատանքները կատարվելու են համաձայն աշխատանքային նախագծի՝ ՇՆուԿ 3.02.02.-87-ի և ՇՆուԿ III-4-81-ի, ՍՆԻՊ III-IV.2008թ.-ի դրույթների պահանջներին համապատասխան:

Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ. գործունեության կատարման շինարարության փուլում հիմնական օգտագործվող տեխնիկա-տրանսպորտային միջոցներն են.

- ավտոմոբիլային կոունկ՝ SANY-STC800C
- բեռնատար ինքաթափ՝ Shacman F3000
- էքսկավատոր՝ CAT 320GC
- բեռնիչ՝ CAT428
- շարժական կոմպրեսոր
- բետոնախառնիչ
- բետոնախառնիչ պոմպ,
- էլ.եռակցման սարք
- ձեռքի էլեկտրական և պարզագույն մեխանիկական գործիքներ և այլն:

Կարող են օգտագործվել համարժեք տեխնիկական տվյալներով այլ տեխնիկա-տրանսպորտային միջոցներ: Շինարարական աշխատանքների՝ բեռնման-բեռնաթափման ժամանակ օգտագործվող բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբոնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին՝ համաձայն ՇՆ և Կ III-4-80* պահանջներին: Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա 5⁰-ից ոչ ավել թեքություն:

Շինտեխնիկական լինելու է Կապալառու ընկերության սեփական տեխնիկական կամ անհրաժեշտության դեպքում վարձակալվելու են այլ կազմակերպություններից: Մեքենաներն աշխատելու են ըստ հերթականության և ըստ անհրաժեշտության: Աշխատող մեքենաները կայանվելու են գործունեության տարածքում՝ շին.հրապարակում: Շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է ավազի կամ բետոնասալերի օգտագործում՝ վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Կառուցապատման բոլոր լուծումների համար հաշվի են առնվելու տեղանքի պայմանները, կազմակերպվելու է անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր միջոցառումներ՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:

Ամբողջ շինարարության ընթացքում վերահսկվելու են շինարարության որակի չափանիշները՝ տեխնիկական վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից: Ակտավորվելու են թաքնված աշխատանքները, գրանցելով վարման մատյանում:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների՝ կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ՝ հատկապես կապված կոունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների հետ:

Էլեկտրամատակարարում. շինարարության ընթացքում Էլեկտրամատակարարումը կատարվելու է համաձայն՝ «ՀԷՑ» ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի հիման վրա՝ միացումը կատարվելու է «Ջերմոմագիստրալ» 10կՎ ՕԳ-ի թիվ 68 հենասյունից, էլեկտրաէներգիայի աղբյուրը՝ «Միկրոշրջան» 35/10 Կվ ե/կ-ից բջիջ 23, տեղադրելով առանձին հաշվիչ:

Ջրամատակարարում և ջրահեռացում. Շինարարության փուլում աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում, բերովի շշերով, իսկ աշխատողների կենցաղային կարիքները հոգալու նպատակով տեղադրվելու է բիոզուգարաններ՝ լվացարանով:

Աղբահեռացում. շինարարության ընթացքում առաջանալու են շինարարական նյութերի մնացորդներ/ավազ, յուղոտված լաթեր, մետաղական մասեր/, որոնք տարանջատվելու են կուտակվելու են շինհրապարակում նախատեսված վայրում, չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը:

Առաջանալու է կենցաղային աղբ՝ 3960 կգ/տարի քանակով: Կենցաղային աղբի կուտակման համար տեղադրվելու են 1.5*1 չափերի 7 աղբարկղ:

Շինարարության փուլում աղբահեռացումը կատարվելու է համաձայն Հրագրան համայնքի հետ կնքված պայմանագրի, որը կկնքվի համայնքի կողմից տրված շինթույլտվության փուլում:

Սոցիալական. Շինարարության փուլում աշխատելու են 33 մարդ, որից՝

- Ինժեներատեխնիկական անձնակազմ՝ 4 մարդ
- Արհեստագործներ և բանվորներ՝ 25 մարդ
- Մեքենավարներ և օգնականներ՝ 4 մարդ

Բարեկարգում. Կանաչապատում. Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել:

Նախատեսվում է 28325մ² մակերեսով կանաչապատում՝ Տնկվելու են 210 հատ նոր ծառեր: Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ՝ համաձայն Հրագրանի համայնքապետարանի կողմից համաձայնեցված կանաչապատման նախագծի:

8.2 Շինարարության իրականացման ժամանակացույցը

Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը կազմվելու է 2 տարի կամ 24 ամիս/ 730 օր/:

Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույց

ՇՆՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Շինարարական աշխատանքների տևողությունը 730 օր (2 տարի)

N	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՐ																							
		ամիս	ամիս	ամիս	ամիս	ամիս	ամիս	ամիս	ամիս	ամիս	ամիս	ամիս	ամիս	ամիս	ամիս	ամիս	ամիս	ամիս	ամիս	ամիս	ամիս	ամիս	ամիս	ամիս	ամիս
1.	Շինհրապարակի կազմակերպում	■																							
2.	Քանդման և հողային աշխատանքներ		■	■																					
3.	Հողի տեղափոխումը			■																					
4.	Հիմքերի կաղապարամածի պատրաստում				■																				
5.	Հիմքերի ամրանավորում					■	■																		
6.	Հիմքերի բետոնացում						■	■																	
7.	Կարկասի կաղապարամածի պատրաստում								■	■	■														
8.	Կարկասի ամրանավորում, բետոնացում									■	■	■	■	■											
9.	ե/բ ծածկի իրականացում										■	■	■	■	■	■									
10.	Արտաքին պատերի իրականացում															■	■	■	■						
11.	Հարթ տանիքի իրականացում																				■	■			
12.	Վիտրամների, պատուհանների տեղադրում																					■	■		
13.	Երեսապատում																					■	■	■	
14.	Հատակների իրականացում																						■		
15.	Դռների տեղադրում																							■	
16.	Հարդարման աշխատանքներ																						■	■	■
17.	Տարածքի բարեկարգում																							■	■
18.	Փաստաթղթերի պատրաստում մուտքագրում																								■

8.3 Օգտագործվող բնատեսուրսներ և նյութեր

Կառուցապատման շինարարության և շահագործման փուլերում բնատեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ խմելու-կենցաղային նպատակով:

Ջուր. շինարարության փուլում ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու, տնտեսա-կենցաղային կարիքների, տարածքի ջրցանի, հողի(գրունտի) խոնավացման և անհրաժեշտության դեպքում հրդեհաշիջման համար:

Աշխատողների խմելու ջուրը բերվելու է պատրաստի՝ շէրով: Ջրցանի և կենցաղային նպատակներով նախատեսվող ջուրը կբերվի ջրցանի համար նախատեսված ավտոցիստեռնով կամ ջրցան թնդանոթով, համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությունների կամ անձանց միջոցով, որոնց հետ կկնքվի պայմանագիր, ներառելով ջրառի կետը: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհամարման, ջրցանի և մեքենաների անիվների լվացման համար: Տեխնիկական ջուրը կլցվի 20տ տարողության բաքի մեջ:

Շինարարության ընթացքում աշխատելու է 33 մարդ, որից 4-ինժեներա-տեխնիկական աշխատողներ:

ա) **Շինանձնակազմի կենցաղային** և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{Է.ձ.}} = (n \times N + n1 \times N1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 4 մարդ

N– ԻՏՍՍ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n1– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 29 մարդ

N1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 730 օր:

$$W_{\text{խ.տ.}} = (4 \times 0.016 + 29 \times 0.025) \times 730 = 575,97 \text{մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0,79 \text{մ}^3/\text{օր:}$$

բ) **Ջրցանի համար** օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝ $U1 = S1 \times K1 \times T$, որտեղ՝

S1 – ջրվող տարածքի մակերեսը 7000 մ²(շին.հրապարակ, ճանապարհներ)

K1 – 1մ² օրական ջրցանի նորմը, 0.0015մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 260 (առավելագույնը 260 օր, ներառված կրկնակի ջրցանը)

$$U1 = 7000 \times 0.0015 \times 260 = 2730 \text{մ}^3/\text{շին. ժամ. կամ } 2,73 \text{մ}^3/\text{օր:}$$

գ) **Մեքենաների անիվների լվացման համար Մեքենաների անիվների լվացման համար**

Շինարարության փուլում նախատեսվում է մեքենաների լվացում՝ 2-3 հատ, օրը 1 անգամ հաճախականությամբ, տեղադրվելու են 1 հատ լվացման կետ, ջրաքանակի նորման ընդունված է 0,8լ/վրկ:

$$Q2 = 0.8 \times 1 = 0,8 \text{լ/վրկ}$$

Շինարարության փուլում նախատեսվում է մեքենաների լվացում՝ 2-3 հատ, օրը 1 անգամ հաճախականությամբ, տեղադրվելու են 1 հատ լվացման կետ, ջրաքանակի նորման ընդունված է 0,8լ/վրկ: Շին.տեխնիկայի աշխատանքը հաշվարկված է 1040 ժամ:

$$Q2 = 0.8 \times 1 = 0,8 \text{լ/վրկ կամ } 2880 \text{լ/ժամ կամ } 2.9 \text{մ}^3/\text{ժամ}$$

$$\text{կամ } 2.9 \text{մ}^3 * 1040 \text{ ժամ} = 3016 \text{շին/ժամ}$$

Ընդամենը ջրի սպառումը շինարարության փուլում կլինի $6321.9 \text{մ}^3/\text{շին}$. Ժամ:

Կեղտաջրեր. շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տեղադրվող $1*1,5$ չափերի սանհանգույցից՝ 4 հատ բիոզուգարաններից: Բիոզուգարանների մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը միանալու են Հրազդան համայնքի համապատասխան համակարգերին:

Շահագործման փուլում նախատեսվում է FBR 8 մակնիշի մաքրման կայանի տեղադրում, որն ապահովում է կեղտաջրերի կենսաբանական մաքրում:

Շահագործման փուլում խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է, ելնելով 1 աշխատողի ջրօգտագործման առավելագույն նորմից/200լ/.

$$V_y = n \times 200_l$$

Որտեղ՝ n - աշխատողների թիվն է՝ 50

$$V_y = 200 \times 50 = 10\,000_l/\text{օր}$$

Մեկ օրվա կտրվածքով ընդհանուր ջրօգտագործումն առավելագույն թվով աշխատողների համար կկազմի $10 \text{մ}^3/\text{օր}$:

Շահագործման փուլում կեղտաջրերի արտահոսքը կկազմի.

$$W_{\text{կենց.կոյ.}} = W_{\text{կ.}} \cdot X (1 - \text{Կ})$$

Որտեղ,

շահագործման փուլում ջրածախսը՝

Կ - կորուստները, ընդհանրացված 5 տոկոս (0.05),

Հետևաբար հեռացվող կեղտաջրերի քանակը կկազմի.

$$W_{\text{կենց.կոյ.}} = 10 \times (1 - 0,05) = 9.5 \text{մ}^3/\text{օր կոյուղատարից արտահոսքի քանակ:}$$

Հրդեհաշիջման համակարգի անխափան աշխատանքի համար շինության ներսում նախատեսվում է կառուցել 240մ^3 ծավալով ջրի պահուստային բաք: Հրդեհաշիջման համար պահանջվող ջրի ելքը հաշվարկվելու է համաձայն «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ.40-01.01-2014 նորմերի:

8.3.2 Նյութեր. Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, մասնավորապես.

- երկաթբետոն
- երկաթբետոնե կարկասներ
- փայտ
- մետաղ, մետաղական կառուցվածքներ
- ամրանային ձողեր
- ավազ, խիճ,
- պողպատ

- բետոն
- բետոնյա սալ
- դեկորատիվ մետաղ
- ապակի
- բազալտ այլն:

Շենքը նախատեսված են միաձույլ երկաթբետոնե կարկասային համակարգով:

Կառույցի երեսապատումը նախատեսվում է իրականացնել՝ ճակատները չժանգոտվող պողպատի ֆասադային պանելներով և մետաղական դեկորատիվ ցանցերով իսկ ցոկոլային հատվածները հղկած բազալտի սալերով:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույցի տեղադրում և բետոնախառնուրդի պատրաստում չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով: Շինհրապարակում նախատեսվում է բետոնի տեղադրման վայր պաշտպանված քամուց, անձրևից և ձյան տեղումներից: Բետոնը շինհրապարակում լցվելու է կաղապարների մեջ բետոնամղիչով:

Շինաշխատանքերը կատարվելու են մասնագիտացված կապալառու կազմակերպությունների կողմից: Շինարարության համար նախատեսված բոլոր նյութերն, ինչպես նաև շենքի արտաքին և ներքին հարդարման նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված (լիցենզավորված) կազմակերպություններից՝ շինինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր շինարարական կազմակերպության արտադրական բազայից:

Ձմռանը ներքին հարդարման և բետոնային աշխատանքները կատարվելու են հատուկ տաքացման պայմաններում:

Շինհրապարակում շինանյութերը պահեստավորվելու են պահեստներում, իսկ բաց տարածքի դեպքում կտեղադրվեն տակդիրների վրա՝ չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը: Սորուն նյութերը պահեստավորվելու են ծածկի տակ կամ կծածկվեն անջրթափանց թաղանթով:

8.4. Շահագործման փուլ.

Նախատեսվում է հասարակական շինության կառուցում՝ արհեստական բանականության տվյալների կենտրոն:

8.4.1 Նոր կառուցվող շենքի կառուցման տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ են.

- Հողամասի ընդհանուր մակերեսը՝ 5,8130 հա կամ 58130մ² (100%)
- Ընդհանուր կառուցապատման տոկոսը/մակերեսը 13,2%/7651մ²
- Անջրանցիկ տարածքի մակերեսը՝ 22154մ²(38.1%)
- Կանաչապատ տարածքի մակերեսը՝ 28325մ² (48.7%):
- Ավտոկայանատեղի 80 մեքենայի համար:
- Ընդհանուր կառուցապատման մակերեսը՝ արտաքին 8131մ²(14%)
- Շենքի կառուցապատման ընդհանուր մակերեսը՝ ներքին 7183 մ²

Հիմնական շինությունը լինելու է մեկ հարկանի՝ միաձույլ ե/բետոնե հիմնականախճով կառույց: Կառույցի մի փոքր հատվածում նախատեսվում է ստորգետնյա տեխնիկական հարկ:

Տարածքում կառուցվելու է նաև ենթակայան, տեխնիկական սարքավորումների համար նախատեսված բաց տարածքներ, բացօթյա ավտոկայանատեղի՝ 80 մեքենայի համար: Հիմնական շինության հարկի բարձրությունը 7.35մ, առաստաղինը՝ 6.85մ:

Ճակատները նախատեսվում է երեսապատել չժանգոտվող պողպատի ֆասադային պանելներով և մետաղական դեկորատիվ ցանցերով իսկ ցոկոլային հատվածները հղկած բազալտի սալերով:

Կառույցի տանիքը նախատեսվում է հարթ՝ համատեղված, ջրահեռացումը՝ կազմակերպված: Շենքի ներսում նախատեսված են

Աստիճանավանդակների դռները նախատեսված են հակահրդեհային և ինքնափակվող: Ապահովված են հակահրդեհային նորմատիվ պահանջները: Կառույցին կից կառուցվելու է 206մ² ընդհանուր մակերեսով 1 ստորգետնիա հարկ, որը նախատեսված է որպես պարզագույն թաքստոց՝ արտակարգ իրավիճակներում բնակչության ծառայելու նպատակով:

Թաքստոցում առկա է սանհանգույց: Թաքստոցն ապահովված է օդափոխության և վթարային լուսավորության համակարգերով:

Նախատեսվող շենքն ապահովված են լինելու ջեռուցման, ջրամատակարարման, ջրահեռացման, օդափոխության, հրդեհամարման համակարգերով՝ համապատասխան ՀՀ-ում գործող նորմերին համապատասխան:

Շենքի հակահրդեհային պաշտպանությունը կազմակերպվելու է համաձայն՝ ՀՀՇՆ 21-01.01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմերի, «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի» կողմից տրված հրահանգների, ինչպես նաև փոշեհատիկային հրդեհաշիջման մոդուլների տեխնիկական անձնագրերի հիման վրա:

Շենքն ապահովված են լինելու ձայնամեկուսացման, ջերմամեկուսացման, օդափոխության և ավտոմատ հրդեհային ազդարարման համակարգերով՝ ծխի և ջերմային ազդանշանային ընդունող-հսկիչ սարքերով, լուսաձայնային-ազդանշանային ազդասարքերով, հրշեջ-փրկարարական մեքենաների մոտեցման ուղիներով:

Շահագործման փուլում շենքն ապահովված են լինելու նաև բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով, որոնց լուծումները նախատեսվել են քաղաքաշինության նախարարի 2006թ. հոկտեմբերի 10-ի N 253-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Հաշմանդամների և ԲՄԽ-երի կենսագործունեության ապահովման համար ապահովված են անհրաժեշտ պայմանները:

Նախագծային լուծումները կատարվելու են հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12.04.2018թ «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N426-Ն որոշմամբ սահմանված պահանջները՝ էներգախնայողության և

Էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված միջոցառումներին համապատասխան: Ինժեներատեխնիկական համակարգերի համար նախատեսված էներգաարդյունավետության նվազագույն պահանջները վերաբերում են՝

- 1) ջեռուցման համակարգերին.
- 2) տաք ջրամատակարարման համակարգերին.
- 3) օդի լավորակման համակարգերին.
- 4) ընդհանուր օդափոխման համակարգերին կամ դրանց համակցությանը.
- 5) լուսավորության համակարգերին:

Գազամատակարարում. գործունեության փուլում բնական գազի օգտագործում չի նախատեսվում:

Ջերմամատակարարում. Շենքի ջեռուցումը կատարվելու է էլեկտրական սարքերի միջոցով: Շենքի ջեռուցումը, ջրամատակարարումն կատարվում է էլեկտրական հոսանքի միջոցով: Օգտագործվելու են ջրատակացուցիչներ և VRF (Mitsubishi):

Սանհանգույցներում տաք ջրամատակարարման համար նախատեսվում է տեղադրել ծավալային էլեկտրական ջրատաքացուցիչներ՝ սանհանգույցների կեղծ առաստաղներում:

Հովացման համակարգ Շենքի հովացումը աֆիսային մասում կատարվելու է VRF (Mitsubishi) համակարգի միջոցով՝ էլեկտրական հոսանքով և Ֆրեոնային համակարգով: Տեխնիկական սենյակների հովացումները կատարվելու են ջրային ֆանկոյներով, ջուրը ջերմակրող հեղումը (պրոպիլեն գլիկոլի հիմքի վրա, պատրաստված հատուկ հեղուկ) սառեցվելու է չիլերային համակարգերի հիման վրա: Ցիկլը փակ ցիկլ է:

Օդափոխության, ձայնամեկուսացման լուծումները: Օդափոխության կատարվում է էլեկտրական հոսանքի միջոցով դրսից մաքուր օդի ներմուծմամբ հատուկ խողովակներով: Հատուկ սարքավորումներով և քամհաներով օդը խոնավեցնում և մատակարարվում է շենք և դուրս բերվում շենքից:

Շենքին ձայնամեկուսացում չի նախատեսվում, նախատեսվում է ջերմամեկուսացում որը ծառայելու է նաև ձայնամեկուսիչ, հանքային բամբակ:

Էլեկտրամատակարարում. ենթակայան. Համաձայն ՀԷՑ ի կողմից տրամադրված տեխ պայմանի էլեկտրաէներգիայի աղբյուր են հանդիսանում «Հրազդան ՀԷԿ»-ը և «Հրազդան ՋԷԿ»-ը: Միացման կետեր են հանդիսանում Հանքավան և Տարոն 110կՎ օդային գծի մոտակա խարսխային հենարանների ճյուղավորման մեկուսիչները:

Շենքի և տարածքի էլեկտրամատակարարման համար նախատեսվում է 110/10 ենթակայանի կառուցում և 110 կՎ օդային գիծը, որը սնուցում է 110/10 կՎ ենթակայանը: Էլեկտրամատակարարման համար նախատեսվում է 400կՎԱ հզորության 10կվ լարման ենթակայան, ենթակայանի սնուցման համար 10կՎ լարման մալուխային գծի կառուցում համաձայն՝ 15.12.2025թ. «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված NSՊ-670/1-10/0601 տեխնիկական պայմանի, կնքելով համապատասխան պայմանագիր: Հավելված 5:

Ենթակայանի տրանսֆորմատորի բեռնվածքի հնարավորությունը և էլեկտրադինամիկ ամրությունը պետք է համապատասխանի ԳՈՍՍ 52719-2007 ստանդարտների պահանջներին: Միացումը կատարվելու է «Ջերմումագիստրալ» 10կՎ ՕԳ-ի թիվ 68 հենասյունից, էլեկտրաէներգիայի աղբյուրը՝ «Միկրոշրջան» 35/10 Կվ է/կ-ից բջիջ 23: Միացումը կատարվելու է 10 կՎ լարման մալուխային գծի միջոցով՝ ըստ նախագծի:

Նախագծով նախատեսվում է 3240մ² ընդհանուր մակերեսի վրա կառուցել 110/10կՎ լարման 400կՎԱ հզորության երկու ուժային տրանսֆորմատորներով ենթակայան՝ յուղընդունիչներով: Տրանսֆորմատորների զբաղեցրած մակերեսը կազմելու է 150քառ.մ: Կառուցվելու է նաև ստորգետնյա յուղահավաքներ՝ 29մ² մակերեսով: Տրանսֆորմատորի յուղի ծավալը կազմում է 2x15,3 մ³ / 30,6մ³: Յուղահավաքը պատրաստված է ցեմենտի կեղևի շերտից՝ լցված 250 մմ խճաքարի շերտով, պարագիծը շրջապատված է ցանկապատային սալիկներով: Յուղահավաքի չափսերն են՝ 8.5 x 9 մ: Այն ներառում է 1200 x 1200 մմ չափսերով մետաղական ցանց, 2.0 մմ N20 պղնձե ցանց, 250 մմ տրամագծով պողպատե խողովակ, 25 մ3 տարողությամբ պողպատե բաք: Ենթակայանից դուրս են գալիս 10 կՎ մալուխային գծեր, որոնք անմիջապես մտնում են տվյալների կենտրոնի շենք:

Օդային գիծ, մալուխագիծ 110կՎ ՕԳ, որը սնուցում է 110/10կՎ ենթակայանը իրականացվելու է երկշղթա՝ երկարությունը 940մ: 10կՎ ՕԳ-ի կառուցման համար ընտրվել է AC 35/6,2 մմ² հաղորդալար: Նոր կառուցվող ՕԳ-ն ճյուղավորվում է Գ/ՈԻ 10կՎ A տիպի փայտե №1*՝ հենարանից և շարունակվում մոնտաժվել նոր տեղադրվող №2*-№20* ե/բ հենարաններով: №20* ե/բ հենարանից ուղեգիծը շարունակվում է մալուխագծով և մտնում նոր տեղադրվող 400կՎԱ ԼՏԵ-ի 10կՎ բաժանմունք: 10կՎ մալուխագծի համար ընտրվել է АПВП-10 3x70/16մմ² տիպի մալուխ, որի երկարությունը կազմում է 20մ (որից 9մ ստորգետնյա, 8մ հենարանի երկայնքով, 3մ ենթակայանում): Հաշվի առնելով այն համգամանքը, որ նախագծվող 10կՎ մալուխագծի երկարությունը չի գերազանցում 20մ, հետևաբար լրացուցիչ ՕՍԻ տեղադրելու կարիք չկա: №4* ե/բ հենարանի վրա նախատեսվում է տեղադրել կոմերցիոն հաշվառքի կետ:

ԼՏԵ-ի հողանցում: ԼՏԵ-ի հողանցման սարքավորումն ընդհանուր է 10 և 0.4կՎ լարման համար: ԼՏԵ-ի հողանցման համար նրա շուրջը նախատեսվում է ստեղծել հողանցման եզրագիծ, որին ոչ պակաս, քան երկու կետում պետք է միացնել ենթակայանը: Հողակցման եզրագիծն իրականացվում է ԼՏԵ-ի շուրջ տեղադրվող 4x40 շերտապողպատից հորիզոնական հողանցիչ) և 1.5մ երկարությամբ 50x50x5մմ անկյունային պողպատից (ուղղահայաց էլեկտրոդ) բաղկացած ցանցի միջոցով: Հողանցման կոնտուրի դիմադրությունը պետք է լինի ոչ ավելի, քան 4 Օհմ: Հողանցման կոնտուրի մոնտաժումից հետո անհրաժեշտ է ստուգել հողանցման սարքավորման դիմադրությունը:

Չբավարարելու դեպքում պետք է ավելացնել էլեկտրոդների քանակը նորմային հասցնելու համար: 10/0.4կՎ ԼՏԵ-ն ընտրվել է ըստ ՕՏՊ.Բ.03.61.43-97 տիպարային ալբոմի: Գերլարումներից պաշտպանությունն իրականացվում է 10կՎ և 0.4կՎ գերլարման սահմանափակիչների միջոցով, որոնք տեղադրված են 10կՎ մուտքի և 0.4կՎ հաղորդաձողերի վրա: Նոր տեղադրվող ԼՏԵ-ն, 10կՎ ՕԳ-ի ուղեգիծը համաձայնեցված է բոլոր շահագրգիռ կազմակերպությունների հետ:

Հենարանների տեղաբաշխումը կատարված է, ելնելով ընտրված հենարանների հաշվարկային հենամեջերից տվյալ կլիմայական շրջանի համար: Նախագծվող 10 կՎ մալուխագծերի օպերատիվ անջատումների համար №2* և №20* հենարանների վրա նախատեսվում է տեղադրել РЛНД1-10/400У1 տիպի գծային բաժանիչներ՝ շահագործման հուսալիության և փոխանջատումների օպերատիվ կազմակերպան համար: 10կՎ ՕԳ-ի հենարաններն ընտրվել են ըստ 3.407.1.-143.1 տիպային ալբոմի: ԷՄԿ տեխնիկական կանոնակարգի՝ մաս 2 բաժին 1 գլուխ 48 568 կետի համաձայն ՕԳ-ի հաղորդալարերի նվազագույն հեռավորությունը հողի մակերևույթից պետք է լինի ոչ պակաս 6մ, որն ապահովված է

նախագծում:

Լուսավորություն. Ենթակայանում նախատեսվում է լուսավորության սարքեր, որոնք տեղադրվում են կայծակնային պաշտպանության կայմերի վրա, ինչպես նաև ցանկապատի պարագծի երկայնքով:

Շանթապաշտպանություն. Այն պատրաստված է 26 մ բարձրությամբ ինքնուրույն կանգնած շանթարգելներից, քանակով՝ 2 հատ:

Ջրամատակարարում ԱԲ կենտրոնի համար կառուցվելու է նոր ջրամատակարարման համակարգ, որը միանալու է բնակավայրի ջրամատակարարման ցանցին՝ համաձայն «Վելիա Ջուր» ՓԲԸ –ի կողմից տրված տեխնիկական պայմանի: Շինության ջրամատակարարումը նախատեսվում է կատարել համայնքային ցանցի սնուցմամբ՝ շինության ներսում տեղակայվելիք պոմպային կայանների միջոցով: Արտաքին և բակային ցանցերը իրականացվելու են պոլիէթիլենե իսկ ներքին ցանցը պոլիպրոպիլենե ճնշումային խողովակներով:

Հրդեհամարման ցանց, հակահրդեհային անվտանգություն. Շինության հրդեհաշիջումը կատարվելու է սպրինկլերային և հրշեջ ծորակների համակարգերով: Սպրինկլերային համակարգը ծածկում է ամբողջ շինությունը դեպի ներքև և դեպի վերև նայող սպրինկլերներով, սերվերային տարածքներում համակարգը իրականացվում է չորախողովակներով: Նաև նախատեսված է տեղադրել 11 հատ հրշեջ ծորակներ: Միջանցքներում բոլոր դռների մոտ նախատեսվում է տեղադրել կրակմարիչներ: Հրդեհաշիջման համակարգի անխափան աշխատանքի համար շինության ներսում նախատեսվում է կառուցել 240մ³ ծավալով ջրի պահուստային բաք: Շինության տարածքում նախատեսված են 2 հատ արտաքին հիդրանտներ:

Ջրահեռացում. Կենցաղային Կոյուղի. Իրականացվում է համաձայն «Վելիա Ջուր» ՓԲԸ –ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Շահագործման փուլում տեղադրվելու է կենցաղային կեղտաջրերի մաքրման կայան: Գեներատորների տարածքի ջրերը մինչև մաքրման կայանն ուղարկելն անցնելու են յուղորսիչի միջով: Գեներատորները ապահովելու է շինության անխափան էլեկտրական հոսանքի սնուցումը: Գեներատորների ամբողջ տարածքի ջրերն հավաքվում են հոսակներով և բաժանված են երկու հավասար հատվածների: Ամեն հատվածի ջուրը անցնում է 500լիտր/ժամ արտադրողականություն ունեցող յուղորսիչի միջով: Գեներատորների աշխատանքի և սպասարկման պրոցեսում բացառված չեն յուղի կաթիլների արտահոսքը: Յուղորսիչների տեղադրումը բացառելու է այդ կաթիլների մուտքը մաքրման կայան:

Մաքրման կայանը ձեռք է բերվում տեղական արտադրողից: Տեղադրվելու է FBR 8 մակնիշի մաքրման կայան, որը ունի 8մ³ /օր տարողություն: Մաքրման կայանը իրենից ներկայացնում է 2.4մ տրամագծով և 2.8մ խորությամբ կլոր հատակագծով, գործարանում պատրաստված պոլիպրոպիլենե շիթերից կոմպլեկտ կառույց: Մաքրման կայանի հատակի բետոնացումը նախատեսվում է իրականացնել B25 W6 F150 դասի բետոնով ; Հիմքը՝ 200մմ հաստությամբ միաձուլվ ե/բ սալ 4մ x : Մաքրման կայանի ծածկը՝ ավազային պաշտպանիչ շերտից է: Օդամղիչ տեղադրվում են առանձին սենյակում , կամ ծածկված տարածքում :

Կենսաբանական մաքրման կայանի պարամետրերն են:

Մոդել	Օրեկան կենցաղային կեղտաջրի ծավալ մ ³	Կենսաբանական տվյալներ կայանի մուտքում			Երաշխավորվող կենսաբանական տվյալներ կայանի ելքում			Չուսմի ծախս (կ-կո/ժ)	Բարձրություն (մ)	Տրամագիծ (մ)
		ԹԿՊՏ (մգ/լ)	ԹՔՊ (մգ/լ)	Կախված մասնիկներ (մգ/լ)	ԹԿՊՏ (մգ/լ)	ԹՔՊ (մգ/լ)	Կախված մասնիկներ (մգ/լ)			
FBR 8	8	300	550	350	18	80	40	-	2.93	2.55
Ցուղորսիչ	-	-	-	-	-	-	-	-	1.8	1.4


Կեղտաջրերի մաքրման փուլերն են:


1- Մաքրման առաջին՝ համասեռման փուլ, որտեղ կատարվում է սկզբնական աերացիոն և քայքայման ավելի երկար ժամկետ պահանջվող օրգանական նյութերի մաքրում:

2- Հաջորդը՝ աերացիոն փուլն է, որտեղ կատարվում է բիոլոգիական մաքրում ԹԿՊ և ԹՔՊ-ի նվազեցում մինչև 95 %, օգտագործելով միկրոպոպուլացիներ և բիոֆիլտրեր , վերջինները ունեն հիդրավլիկական և մեխանիկական հարվածների նկատմամբ մեծ առավելություն՝ դիմադրություն: Այս փուլում կատարվում է նաև չնչին քանակությամբ տիղմի ավելացում:

3- Հաջորդը՝ տիղմի նստեցման փուլն է , որտեղ տիղմը նստելով, ջուրը առանձնանում է և անցնում հաջորդ փուլ, իսկ տիղմը վերադառնում է առաջին փուլ :

Պարզեցված ջուրը ինքնահոս հեռանում է կայանից դեպի դրենաժային հոր:





Ցանկապատում. տարածքը ցանկապատվելու է մոտ 3 մ բարձրության մետաղյա ճաղավանդակով՝ դարպասներով՝ ապահովված արտաքին լուսավորությամբ:

Սոցիալական . շահագործման փուլում շենքն ուենալու է մինչև 50 աշխատող:

Աղբահեռացում. Շահագործման փուլում աղբահեռացումը կատարվելու է Հրազդանի համայնքապետարանի հետ համաձայնեցված՝ պայմանագրային հիմունքներով: Տեղադրվելու են 6 հատ 1*1,5 չափերի աղբամաններ, ինչպես նաև տեսակավորման աղբամաններ: Աղբը տեղափոխվելու է Հրազդան համայնքի հետ համաձայնեցված վայր՝ կնքված պայմանագրի հիման վրա:

9.Փակման և հետփակման փուլեր.

Ելնելով գործունեության բնույթից հաշվետվությունում չի դիտարկվում փակման և հետփակման փուլերի նկարագրությունը և ազդեցությունները:

Փակման փուլի իրականացման դեպքում փակման փուլի գործընթացը պետք է կատարվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ նախօրոք տեղյակ պահելով համայնքին:

10. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, ռիսկերը (շինարարության և շահագործման, փակման փուլ)

Գործունեության իրականացման ենթակա տարածքը գտնվում է Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի 20 հասցեում: Նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կառաջանան հիմնականում շինարարության փուլում, կապված՝ հողային աշխատանքների, կեղտաջրերի կառավարման, մեքենաների և շինտեխնիկայի շահագործումից առաջացող ծխագազերի արտանետումների, շինտեխնիկայի շահագործման և ավտոտրանսպորտի տեղաշարժի արդյունքում աղմուկի մակարդակի ավելացման, թափոնների կառավարման, բետոնային աշխատանքների, մարդու առողջության և աշխատանքի անվտանգության, արտակարգ իրավիճակների ռիսկերի առաջացման հետ, որոնք կլինեն կարճաժամկետ:

Ներկայացված հաշվետվությամբ նախատեսվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ՝ բնապահպանական կառավարման պլան:

Շինարարության և շահագործման փուլեր.

10.1 Օդային ավազան.

Գործունեության իրականացման շինարարության փուլում լինելու են օդային ավազան արտանետումներ՝ տրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում՝ ծխագազերի և հողային աշխատանքների (փորման, հարթեցման), ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով: Նկատի ունենալով բնակավայրից մոտ 1 կմ հեռավորությունը օդային ավազանի վրա աղտոտվածությունը չի կարող հասնել բնակավայրերին, ուստի գնահատում չի իրականացվել:

Օդի աղտոտվածության մակարդակը վերահսկելու նպատակով շինարարության ընթացքում Կապալառուի կողմից կիրականացվի օդի աղտոտվածության գործիքային չափումներ:

ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում օդային ավազան արտանետվող անկազմակերպ փոշու արտանետումները համաձայն հաշվարկների /հավելված 10/ կկազմի 3,32 տ/շինժամ, 2,22գ/վրկ: Նկատի ունենալով նախատեսվող գործունեության մեծ հեռավորությունը բնակելի տարածքներից և նախատեսված միջոցառումները, բնակելի տարածքներ որևէ աղտոտվածություն չի կարող հասնել:

Հաշվետվությունում նախատեսվել են բնապահպանական միջոցառումներ ուղղված՝ օդային ավազան արտանետումները մեղմացնելու, նորմերի սահմաններում պահպանելու նպատակով:

10.2 Հողային ռեսուրսներ.

Գործունեության ենթակա տարածքի հողի նպատակային նշանակությունը բնակավայրի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման: Համաձայն «ԳԵՈՌԵՍԵԲԶ» ՍՊԸ-ի կողմից կատարված ուսումնասիրությունների՝ տարածքում առկա է 0.2-0.6 մետր հզորության հողաբուսաշերտ: Առաջին շերտի հողային կազմը կավավազային է, հազվադեպ խճով և մեծաբեկորներով, ավազային նյութի խառնուրդով մինչև 15%, տարածումը համատարած է:

Համաձայն նախագծային լուծումների՝ ԱԲ կենտրոնի կառուցման աշխատանքներից կատարվելու է 16800մ³ ծավալի հողային աշխատանքներ, որից 2537 մ³ բուսահող: Հանվող 14263մ³ հողային զանգվածից 1650մ³ կատարվելու է հետ լիցք, մնացած 12613 մ³ ծավալի հողային զանգվածը կուտակվելու և պահվելու է տեղում՝ շինարարության ընթացքում հետագա օգտագործման՝ տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով:

Հողային զանգվածն առաջանալու է հիմքերի փորման աշխատանքներից, անձրևաջրերի հեռացման, ջրահեռացման համակարգերի անցկացման աշխատանքներից:

Գործունեությունն իրականացվելու է փակ ցանկապատված տարածքում:

Հողային աշխատանքները կատարվելու են մեքենա-մեխանիզմներով և ձեռքի ժամանակակից գործիքներով:

Բուսահողը պահվելու է տարածքում՝ ծածկված վիճակում և օգտագործվելու է տարածքի բարեկարգման և կանաչապատման նպատակով:

Շինարարության փուլում նախատեսվող գործունեության իրականացման հողային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցությունները մեղմելու, աղտոտումից պահպանելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են միջոցառումներ:

Շահագործման փուլում հողային ռեսուրսների վրա ազդեցություն չկա:

10.3 Ջրային ռեսուրսներ.

Համաձայն «ԳԵՈՌԵՍԵԲԶ» ՍՊԸ-ի կողմից տրված ինժեներաերկրաբանական եզրակացության՝ ուսումնասիրվող տարածքում ըստ 12.0 մետր փորված խորությունների, ստորգետնյա ջրեր չեն բացահայտվել, համաձայն ֆոնդային նյութերի տվյալների դրանք տեղադրված են 25.0 մետրից խորը: Տարածքը գտնվում է Հրազդան գետի հոսանքի աջակողմյան սարահարթի սահմաններում, ունի կտրտված ռելիեֆ: Կառուցապատվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուները, մշտական ջրային հոսքերը: Ուստի մակերևութային և գրունտային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում:

Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները ջրային ռեսուրսներ:

Կեղտաջրերի հեռացման համար կտեղադրվեն բիոզուգարաններ՝ ջրային և հողային ռեսուրսներն աղտոտումից զերծ պահելու նպատակով: Բիոզուգարանների մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլում կեղտաջրերի հեռացման համար տեղադրվելու է մաքրման կայան՝ հողային և ջրային ռեսուրսները աղտոտումից պահպանելու նպատակով:

10.4 Կենսաբազմազանություն.

Գործունեության ենթակա տարածքը ենթարկվել է մարդու ազդեցությանը՝ կապված մարդու գործունեության հետ, քանի որ տարածքը նախկինում բնակիչների կողմից օգտագործվել է որպես վարելահող:

Բուսական աշխարհ. նախատեսվող գործունեության ենթակա տարածքն արդեն ենթարկված է անտրոպոգեն ազդեցությունների: Տարածքում բացակայում են ծառերը, թփերը, ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները:

Կենդանական աշխարհ. մարդկային գործոնի, երթևեկության՝ մեքենաների շարժի, աղմուկի պայմաններում տարածքում բացակայում են ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդատեսակները, ինչպես նաև կենդանիների բնադրավայրերը, միգրացիոն ուղիները:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է նախկինում մարդու գործունեության ակտիվ գոտում, ուստի կենսաբազմազանությանը հասցվող հնարավոր ռիսկեր չեն պարունակում:

Հաշվետվությունում նախատեսվել են բնապահպանական միջոցառումներ՝ ուղղված կենսաբազմազանության պահպանմանը:

10.5 Թափոններ.

Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են թափոններ.

- Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի) (ծածկագիր՝ 91200400 01 00 4) կառուցապատման փուլում՝ 3960կգ/տարի: Կենցաղային աղբը չի տեսակավորվում, կարող են ներառել տարբեր տեսակի թափոններ:

- Յուղոտված լաթեր(ծածկագիր՝ 58200600 01 01 4)՝ 4կգ: Լինում են միկրոֆիբրայից կտորների, ձեռնոցների տեսքով, դյուրավառ են:

- Յուղերով աղտոտված ավազ(յուղի պարունակությունը - 15%-ից ցածր՝ 31402303 01 03 4)- մոտ 2մ³: Ավազը բնական հատիկավոր շինանյութ է:

- Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող» (ծածկագիրը՝ 31401100 08 99 5)՝ 5-րդ դաս՝ 12613 մ³: Ավելցուկային հող է, որը չի օգտագործվելու է շինարարության ընթացքում, համապատասխանում է 5-րդ կետում նկարագրված հողի կազմությանը:

- Կտորների տեսքով սև մետաղներ պարունակող թափոններ՝ (ծածկագիր՝ 35131200 01 99 5)-12կգ/տարի, օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված այլումինե հաղորդալար (ծածկագիր՝ 35310105 01 99 5)՝ մոտ 4կգ և օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված պղնձե հաղորդալար (ծածկագիր՝ 3531030501013)՝ 6կգ թափոնների տեսքով: Սև մետաղները հիմնականում երկաթի պարունակությամբ են, ջերմակայուն են: Պղինձը կարմրավուն երանգի պղնձի պարունակության է, հալվում է բարձր ջերմաստիճանում: Այլումե թափոնները արձաթափայլ, թեթեև մետաղ է, հալվում է բարձր ջերմաստիճանում:

Գործունեության ընթացքում առաջացող թափոնները համաձայն՝ ՀՀ բնապահպանության

նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N430-Ն և 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն հրամանների՝ պատկանում են 3, 4 և 5-րդ դասերին:

Կենցաղային աղբի տեղափոխումը կատարվելու է համաձայն Հրագրան համայնքապետարանի հետ համաձայնեցված՝ պայմանագրային հիմունքներով: Կենցաղային աղբի հավաքման համար տեղադրվելու է 6 աղբարկղեր:

Կենցաղային աղբի հաշվարկները՝ շինարարության և շահագործման փուլեր.

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տ

n – աշխատողների թիվն է

$$M=33*120= 3960 \text{ կգ/տ կամ } 6.4\text{կգ/օր/ըստ աշխատանքային օրերի թվի՝ } 624 \text{ օր/}$$

Շինարարությունը տևելու է 2 տարի, հետևաբար

$$M=3960*2 =7920\text{կգ/տ կամ } 12.7 \text{ կգ/օր (624 աշխատանքային օր)}$$

Շահագործման փուլում.

Շահագործման փուլում կենցաղային աղբի քանակը հաշվարկվում է, ելնելով ԱԲ կենտրոնի առավելագույն ծանրաբեռնվածությունից.

$$M=50*360=18000\text{կգ/տարի}$$

Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակման համար կտեղադրվեն 6 հատ աղբի հեռացման աղբամաններ, նաև աղբի տեսակավորման աղբամաններ:

Շահագործման փուլում ենթակայանի, օդային գծի վթարման կամ վերանորոգման աշխատանքները կկատարվեն համապատասխան մասնագիտական կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Ուստի թափոնների կառավարումը տեղափոխումը, լուծումները տեսակավորում, քանակական գնահատում, կկատարվի համապատասխան մասնագիտական կազմակերպությունների կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Ենթակայանի տարածքում թափոններ կարող են առաջանալ միայն վթարների կամ վերանորոգման դեպքում : Հնարավոր առաջացող թափոնատեսակներ են .

- Հալոգեններ, պոլիքլորացված դիֆենիլներ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղեր (3-րդ դաս՝ 54100207 02 033)՝ 30,6 մ³ ընդհանուր քանակով: Վտանգավոր թափոն է, օգտագործվում է որպես տրանսֆորմատորային յուղ, կազմված է քիմիական սինթետիկ նյութերից, պատկանում են այն սինթետիկ քիմիական նյութերի դասին, որոնց մեծ մասը քիմիապես կայուն են կենսաբանական քայքայման նկատմամբ: Այդ պատճառով մարդու առողջության վրա թողնում են մեծ վնասակար ազդեցություն: Պետք է պահել հերմետիկ փակ վիճակում:
- Յուղոտված լաթեր (4-րդ 58200600 01 01 4), մոտ՝ 2 կգ:
- Յուղերով աղտոտված ավազ (յուղի պարունակությունը 15%-ից ավել (3-րդ դաս՝ 31402303 04 03 3), մոտ 3մ³:

Վտանգավոր թափոնները լիցենզավորման ենթակա գործունեություն են համաձայն՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի վտանգավոր թափոնների գործածությունը լիցենզավորման ենթակա գործունեություն է, ուստի վերջիններիս վնասազերծումը, տեղափոխումը պետք է իրականացվի համապատասխան լիցենզավորված

կազմակերպությունների կողմից: Շահագործման փուլում՝ վթարների կամ վերանորոգման դեպքում պետք է կատարել նաև թափոնների քանակական գնահատում, ելնելով կատարված աշխատանքների արդյունքում թափոնների գոյացման փաստացի ծավալներից՝ համաձայն ՀՀ Կառավարության 14 սեպտեմբերի 2006թ N 1343-N որոշման:

ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ՝ թափոնների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա մեղմելու նպատակով:

10.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության Ինստիտուտի աշխատակիցների կողմից 2025թ. նոյեմբերի 11-ին կատարվել է գործունեության տարածքի ուսումնասիրություն՝ պատմամշակութային արժեք ունեցող և հնագիտական շերտերի հայտնաբերման նպատակով: Համաձայն ուսումնասիրության արդյունքների՝ տեղանքի երկրաբանական ուսումնասիրության համար բացված կտրվածքների, հողաշերտերի ու հողակուտակումների ուսումնասիրության արդյունքում որևէ հնագիտական նյութ չի հայտնաբերվել: Ուստի 5,81305 հա ընդհանուր մակերեսով նախատեսված տարածքը պատմա-մշակութային միավորների վրա հնաարավոր բացասական ազդեցության տեսանկյունից ռիսկեր չունի, քանի որ այստեղ պատմա-մշակութային միավորներ չեն փաստագրվել: Հողային աշխատանքների իրականացման պարագայում ևս հնագիտական հսկողության սահմանման կարիքն առկա չէ:

Կառուցապատման ենթակա տարածքը չի առնչվում բնակավայրի գոյություն ունեցող պատմա-մշակութային հուշարձանների, ինչպես նաև մարզի հատուկ պահպանվող տարածքների հետ:

Ուստի հնաարավոր ազդեցություններ վերջիններիս վրա չի կանխատեսվում:

Միաժամանակ՝ շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնաարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

Համաձայն ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի N° 438 որոշման 43-րդ կետի՝ հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

10.7 Աղմուկ և թրթռում.

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 90 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 70 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում:

Շինարարության հրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի մակարդակի գումարային ազդեցությունը հնարավոր է գերազանցի սահմանված նորմերը: Քանի որ աղմուկ առաջացնող մեխանիզմներն աշխատելու են ոչ միաժամանակ, դա լինելու է ոչ անընդմեջ, ժամանակավոր: Գործունեության վայրը մոտակա բնակելի տնից գտնվում 902մ և 994մ հեռավորությունների վրա: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին, ցանկապատված շինհրապարակում, հետևաբար շինհրապարակում աշխատող մեխանիզմների աղմուկը կտարալուծվի ընդհանուր աղմուկի մեջ և չի հասնի բնակավայրերին: Ելնելով վերը նշված հեռավորությունից և նախատեսված միջոցառումներից աղմուկի մակարդակը գրոյական է, ուստի հաշվարկները չեն ներկայացվել:

Հաշվի առնելով աղմուկ առաջացնող շինարարական տեխնիկայի աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ:

Թրթռում – Քանի որ շինարարական սարքավորումներն ու տեխնիկան աշխատելու են միայն ցերեկային ժամերին, ոչ մշտական, հերթականությամբ թրթռման մակարդակը ցածր կլինի սահմանային թույլատրելի նորմերից: Բացի այդ համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարի 17 մայիսի 2006թ. թիվ 533-Ն հրամանի՝ նախատեսվում է թրթռաարագության (վիբրոարագության) կամ թրթռաարագացման (վիբրոարագացման) համարժեքային (ըստ էներգիայի) ճշգրտված մակարդակի որոշում գործիքային չափման միջոցով: Ելնելով վերոգրյալից Կապալառու կազմակերպությունը շինարարության ընթացքում կկատարի աշխատող շինտեխնիկայի թորռումների չափագրում, ելնելով փաստացի արդյունքներից:

Միաժամանակ համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը գործունեության և շինհրապարակին հարակից տարածքներում շատ ցածր կլինի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերից:

10.8 Արտակարգ իրավիճակներ.

Համաձայն «ԳԵՈՌԵՍԵՐՉ» ՍՊԸ-ի կողմից տրված ինժեներաերկրաբանական եզրակացության՝ տեղամասը երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների տեսանկյունից պիտանի է կապիտալ շինությունների և բարենպաստ է կառուցապատման համար:

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված բնական աղետների, սողանքների, հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի և շահագործվող շինտեխնիկայի վթարների հետ:

Ելնելով նախագծային լուծումներից, հաշվետվությունում նախատեսվում են համապատասխան բնապահպանական միջոցառումներ՝ շինարարության և շահագործման

փուլերի համար:

10.9 Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը.

(Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն).

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են աշխատողների արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և տեխնիկա-տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում հնարավոր վթարների հետ:

Շինաշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի նորմերի: Մարդու առողջության և անվտանգության պահպանման նպատակով հաշվետվությունում նախատեսվում են միջոցառումներ:

Սոցիալական գործոններ. Նախատեսվող գործունեության վայրը մինչև տարածքի սեփականաշնորհումն բնակիչների կողմից օգտագործվել է որպես վարելահող: Սեփականաշնորհման գործընթացքում հողերը գնվել են մասնավոր սեփականատերերից, փոխվել է հողի նպատակային նշանակությունը:

Շինարարության փուլում Արհեստական բանականության կենտրոնի կառուցումը հնարավոր է առաջացնի.

- Բնակչության պատճառով անհանգստություն՝ մեքենաների և շինարարական տեխնիկայի տեղաշարժից:
- Ծանր տեխնիկայի և մեքենաների շարժի հետևանքով ճանապարհների ասֆալտածածկի վնասում:
- Դրական սոցիալական ազդեցություններ՝ կապված համայնքում նոր բիզնես հնարավորությունների ստեղծման և նոր աշխատատեղերի բացման հետ:

Գործունեության իրականացումը բերելու է համայնքում մոտ 500.0մլն ԱՄՆ դոլլար ներդրման հնարավորություն: Գործունեությունը բնակիչների իրավունքների սահմանափակումներ չի առաջացնում, քանի որ Նախաձեռնողը գյուղացիներին պատկանող սեփական հողային տարածքները ձեռք է բերել համաձայնեցված՝ պայմանագրային հիմունքներով: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը և հեռավորությունը բնակավայրերից, շինարարության փուլում սոցիալական ազդեցությունները կլինեն շատ ցածր:

Շինարարության ընթացքում բացվելու են նոր աշխատատեղեր: Շինարարության փուլում աշխատելու է 33 մարդ, որից՝ 29 բանվոր, 4-ը՝ ինժեներա-տեխնիկական անձնակազմ: Աշխատելու են 6 օր՝ 8 ժամյա հերթափոխային գրաֆիկով: Շինարարական աշխատանքներին ընգրկվելու են հիմնականում համայնքի և բնակավայրի բնակիչները:

Շահագործման փուլում սոցիալական բացասական ազդեցություններ չի նախատեսվում:

Շահագործման փուլում բացվելու են նոր աշխատատեղեր՝ մոտ 50 մարդու համար: ԱԲ Կենտրոնի կառուցումը նպաստելու է համայնքում բնակչության զբաղվածության աճին, նոր աշխատատեղերի ստեղծումը որոշակիորեն կնպաստի նաև համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը, բնակչության շրջանում գործազրկության նվազմանը:

Որպես սոցիալական ծրագիր նախատեսվում է վերանորոգել Հրագոյան քաղաքի զբոսայգիներից մեկը, որի շուրջ համաձայնեցումը համայնքապետարանի հետ քննարկման փուլում է:

10.10 Էներգախնայողության և Էներգաարդյունավետության պահպանման նպատակով ավտոկայանտեղիի կառուցման ժամանակ հաշվի է առնվելու ՀՀ կառավարության N 426-Ն որոշմամբ սահմանված տեխնիկական կանոնակարգի պահանջները, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության բնակլիմայական պայմանները, սենքերում համապատասխան միկրոկլիմային ներկայացվող Հայաստանի հանրապետությունում գործող նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջները:

10.11 Լանդշաֆտ. Կառուցապատումն իրականացվելու է կառուցապատված տարածքում: Գործունեության իրականացումն առաջացնելու է լանդշաֆտի լրացուցիչ ծանրաբեռնվածություն, որը էական ազդեցություն չի ունենա բնակիչների համար, քանի որ գտնվում բնակավայրից 902մ հեռավորության վրա, շինությունը լինելու է ցածրահարկ:

10.12 Բարեկարգում և Կանաչապատում.

Կառուցապատման աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, տարածքի բարեկարգում:

Նախատեսվում է կառուցապատումից ազատ հատվածներում՝ 28325մ² մակերեսի վրա կատարել կանաչապատման աշխատանքներ՝ ծառերի տնկում: Նախատեսվում է տնկել մոտ 210 հատ ծառեր, որից արբիցիա բարդի՝ 99 հատ, թխկի՝ 25 հատ, կեչի՝ 25 հատ, տանձենի՝ 30 հատ, լորենի՝ 31 հատ:

Ոռոգման նպատակով ջրապահանջը որոշվում է СНиП 2.04.02-84-ի համաձայն, այսինքն, 1մ² ոռոգման նպատակով անհրաժեշտ է 0,3-0,4լ ջուր, հետևաբար.

$$W = (M \times 0,4) \times m$$

Որտեղ, M – կանաչապատման ենթակա տարածքն է ըստ կանաչապատման տեսակային կազմի,

m – ոռոգման հաճախականությունը կախված սեզոնից և կլիմայական առանձնահատկությունից,

հետևաբար,

$$W = 28325 \text{մ}^2 \times 0,4 \times 22 = 249260 \text{լ} / \text{ջուր կամ } 249,3 \text{մ}^3 / \text{տարի ջուր (տարվա կտրվածքով):$$

Ոռոգման նպատակով օգտագործվելու է մաքրման կայաններից դուրս եկող մաքրված ջուրը: Մաքրված կոյուղաջրերը և անձրևաջրերի հեռացման համակարգերով միանալու են և պահուստավորվելու են 200մ³ տարողության պահուստային բաքում՝ տարածքի ոռոգման համակարգում հետագա օգտագործման նպատակով:

Նախատեսվում է իրականացնել ավտոմատ ոռոգման հակարգ՝ ցնցուղային ջրցաններով:

Կանաչապատման նպատակով նախատեսվող բուսահողը, տարածքի բուսահողը չբավարարելու դեպքում, ձեռք է բերվելու ՀՀ-ում գործող օրենսդրության հիման վրա՝ համապատասխան թույլտվություններ և համաձայնություններ ստանալուց հետո: Ծառատնկման աշխատանքներ իրականացնելիս առաջնորդվել Կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման դրույթներով:

11.Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումները (Բնապահպանական կառավարման պլան)

Շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք կապված են լինելու կառուցապատման ընթացքում օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսների հնարավոր աղտոտման, կենսաբազմազանության, ինչպես նաև մարդու առողջության պահպանման, թափոնների կառավարման հետ: Հաշվետվությունում նշված բնապահպանական միջոցառումների, մոնիթորինգի ծրագիրը ներկայացվում է նաև Բնապահպանական կառավարման պլանով՝ աղյուսակային տեսքով:

11.1 Օդային ավազան.

Օդային ավազան արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվում է.

- օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս,
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով,
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,
- ցանկապատել շինարարական հրապարակը,
- շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվաղողերը լվանալ,
- հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ,
- շինարարական թափոնները և կենցաղային աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով,

- կառուցվող շենքը ցանցապատել համապատասխան պոլիէթիլենային թաղանթով,
- շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն կօգտագործվեն միայն սարքին վիճակում, պարբերաբար կիրականացվեն ստուգումներ:

- փոշեռսիչ և փոշեճնշիչ սարքավորումների կիրառում՝ համաձայն Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 15-ի «ՀՀՇՆ 13-05-2026 «շինարարական արտադրության կազմակերպում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N11-Ն ու Հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N07-ն հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N02-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Շինարարական աշխատանքների ընթացքում անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում անմիջապես դադարեցվելու է աշխատանքները, աշխատողները կազմակերպված կերպով հեռացվելու են տարածքից ավելի ապահով վայր:

Նշված միջոցառումների իրականացման արդյունքում օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի նախատեսվում:

Շահագործման փուլում օդային ավազան արտանետումներ չեն լինելու, քանի որ կաթսայատուն, հետևաբար գազի կամ այլընտրանքային վառելիքի օգտագործում չի նախատեսվում:

11.2 Հողային ռեսուրսներ.

Հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու համար նախատեսվում է.

• հողի բերրի շերտի հանել և պահել համաձայն՝ ՀՀ կառավարության 02.1.2017թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան,

• բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ձեռնարկվում են միջոցներ, որոնք բացառում են դրա որակական հատկանիշների վատթարացումը:

• նախքան բերրի շերտի հանելը՝ հողի մակերեսը մաքրել խոշոր քարերից, թփերից, կոճղերից,

• հողի բերրի շերտը օգտահանել, հեռացնել ապարները, պահեստավորել առանձին,

• ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկել խոտաբույսերով կամ հողաթմբերի ամրացնել, ծածկել անջրթափանց թաղանթով,

- հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրպարակում, առանձնացված վայրում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,

- շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտն

- օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով,
- շինհրապարակն ապահովվել արտահոսքը կանխող/մաքրող միջոցներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար,
- շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով, իսկ ավելցուկային հողը տեղափոխվելու է համայնքի կողմից հատկացված վայր,
- շինարարական նյութերը տեղադրել հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա,
- ավտոմեքենաները շինհրապարակից պետք է դուրս գան միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով,
- մեքենաների անիվների լվացումը կատարել անիվների լվացման հարթակում,
- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարել տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,
- հնարավորինս սահմանափակել փորված բաց տարածքների առկայությունը, մարդկանց տեղեշարժը այդ հատվածներով,
- բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը շինհրապարակից դուրս, կից գտնվող հողային տարածքներում:

Շահագործման փուլում հողային ռեսուրսների վրա ազդեցություն չի նախատեսվում, ուստի բնապահպանական միջոցառումներ չեն նախատեսվում:

11.3 Ջրային ռեսուրսներ.

Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու նպատակով նախատեսվում է.

- փոշենստեցման համար ջրցանը կատարել ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,
- անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացնել դեպի տարածքում տեղադրվող պարզարան,
- ջրցանման համար օգտագործ միայն տեխնիկական որակի ջուր և պարզարանում կուտակված ջուրը,
- տեխնիկական ջրի մատակարարումը կկատարվի բերովի ջրով՝ համապատասխան լիցենզիա ունեցող ընկերությունների կամ անձի միջոցով,
- տեխնիկական ջրի մատակարարումը կկատարվի պայմանագրային հիմունքներով, որտեղ կնշվի ջրի մատակարարման աղբյուրը,
- պարզարանում մեխանիկական նստեցման հետևանքով առաջացած տիղմը՝ որպես շինաղբ, ժամանակ առ ժամանակ կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,
- նախատեսել դրենաժային համակարգեր՝ ձորակներից հոսող, սեզոնային՝ ոչ

մշտական, ջրային հոսքերի ուղղորդման համար,

- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել համապատասխան մասնագիտացված կետերում,

- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով,

- բետոնանյութի լցվածությունն ապահովել այնպես, որպեսզի բետոնանյութը տեղափոխման ժամանակ չթափվի ճանապարհներին՝ երթեկությանը չխոչընդոտելու և ասֆալտածածկը չվնասելու համար:

Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվում է.

- շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող բիոզուգարաններից,

- բիոզուգարանների մաքրումը կատարել մասնագիտացված կազմակերպությունների կողմից,

- շինարարական աշխատանքների ավարտից հետո վերջիններս ապամոնտաժվելու են և տեղափոխվելու են Կապալառու կազմակերպության կողմից:

Շահագործման փուլում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը միացվելու են բնակավայրի համապատասխան համակարգերին:

- կեղտաջրերի հեռացման համար տեղադրել կենսաբանական մաքրման կայան,
- կայանն ապահովելու 8մ³ /օր կեղտաջրերի մաքրում, ԹԿՊ և ԹՔՊ-ի նվազեցում մինչև 95 %,
- մաքրման կայանից դուրս եկած մաքրված ջրերն օգտագործել տարածքի կանաչապատ հատվածի ռոռզման համար:

11.4 Կենսաբազմազանություն.

Կենսաբազմազանության պահպանման նպատակով նախատեսվում է.

- տարածքում կարող է

- գործունեության և հարակից տարածքներում կարող է հանդիպել կենդանիների Կարմիր գրքում գրանցված Թամբակուրծք թարախահան-*Mylabris sedilithorax Sumakov* տեսակը, ընկերությունը անմիջապես պետք է տեղեկացնի համապատասխան պատասխանատու գերատեսչություններին:

- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ դրանց պահպանության նպատակով, ընկերությունը պետք է տեղեկացնի համապատասխան պատասխանատու գերատեսչություններին,

- աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար,

- հնարավորինս նվազագույնի հասցնել բաց փորվածքները, որպեսզի չխանգարի կենդանիների շարժին :

- Խոշոր թռչունների տարաբնակեցմամբ պայմանավորված, մեկուսացումն աղտոտումից պահպանելու ինչպես նաև թռչունների ոչնչացումը կանխելու համար, հենարանների լայնակների, պահող շարանների ամրացման տեղում, ինչպես նաև ճոպանականգնակների վրա թռչունների նստելը կամ բնակալումը բացառելու համար, նախատեսված են հակաթռչնային ՅՈՒՆԵՍԿՈՒՄ-2 տիպի արգելափակոցների տեղակայում:

- բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներ հայտնաբերելիս հաշվի առնել Հ կառավարության 31.07.2014 թվականի N 781 որոշումը,

11.5 Թափոններ.

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ պահել թափոնների կուտակումներից,

- շինարարական թափոնները կտեսակավորվեն, կհավաքվեն համապատասխան տարաների կամ պոլիէթիլենային պարկերի մեջ, կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, կամ կհանձնվեն մասնագիտացված կազմակերպություններին,

- գործունեության իրականացման ընթացքում թափոնների սկզբնական հաշվառումն իրականացնել թափոնների գոյացման փաստացի ծավալների հիման վրա,

-մեքենաների տակ լցված աղտոտված ավազը տեղափոխել աղբավայր՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից,

-յուղոտված լաթերը հավաքել հատուկ փակ տարողությունների մեջ և հանձնել մասնագիտացված կառույցներին,

- ավելցուկային հողային զանգվածը կուտակվելու և պահվելու է տեղում՝ շինարարության ընթացքում հետագա օգտագործման՝ տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով:

- մետաղական մասերը կառանձնացվեն և որպես մետաղի ջարդոն կհանձնվեն հատուկ մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,

-յուղոտված լաթերը հավաքել համապատասխան տարողությունների մեջ և հանձնել մասնագիտացված այրման կայաններին,

- սորուն նյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկով ապահովված բեռնատարներով կամ բեռնատարները ծածկել անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,

- կառուցապատման փուլում կենցաղային աղբը կուտակել մետաղյա կամ պլաստիկե աղբահավաք տարողությունների մեջ,

- կենցաղային աղբի հեռացումը կատարել կանոնավոր, ըստ անհրաժեշտության՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,

- բացառել աղբի կուտակումը շիհրապարակից դուրս՝ այլ տարածքներում,

- բացառել թափոնների բաց այրումը տարածքում:

Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել 6 հատ 1,5x1մ³ տարողության պլաստմասե կամ մետաղյա աղբամաններ,

ինչպես նաև տեսակավորման աղբամաններ:

Ենթակայանի տարածքում հնարավոր վթարների կամ վերանորոգման անհրաժեշտության դեպքում ընկերությունը պետք է դիմի համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը, որը կիրականացնի թափոնների կառավարումը, ելնելով ՀՀ-ում թափոնների վերաբերյալ առկա օրենսդրության պահանջներից: Անհրաժեշտ է առաջնորդվել.

- Համաձայն՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի վտանգավոր թափոնների գործածությունը լիցենզավորման ենթակա գործունեություն է, ուստի վերջիններիս վնասագերծումը, տեղափոխումը պետք է իրականացվի համապատասխան լիցենզավորված կազմակերպությունների կողմից:
- Անհրաժեշտ է կատարել թափոնների քանակական գնահատում, ելնելով կատարված աշխատանքների արդյունքում թափոնների գոյացման փաստացի ծավալների հիման վրա՝ համաձայն ՀՀ Կառավարության 14 սեպտեմբերի 2006թ N 1343-N որոշման:

11.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Գործունեության տարածքը հնագիտական շերտերի առկայության առումով ռիսկեր չի պարունակում, այնուամենայնիվ նախատեսվում է. Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

11.7 Աղմուկ և թրթռում.

Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են համապատասխան բնապահպանական միջոցառումներ, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկա-տրանսպորտային միջոցներ,
- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում,
- պարբերաբար ստուգել և կարգաբերել տրանսպորտային միջոցների շարժիչները,
- օգտագործվող շին տեխնիկական և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,
- պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը, կատարել չափագրում,

- հնարավորինս բացառել աղմուկ և թրթռում առաջացնող մի քանի մեխանիզմների միաժամանակյա աշխատելու դեպքերը,
- շինհրապարակում աղմուկի մակարդակը գերազանցելու դեպքում աշխատողներին ապահովել ականջակալներով:

Շահագործման փուլում նախատեսվում է.

- Շենքում տեղադրվելու են ժամանակակից ձայնամեկուսիչ, ձայնակլանիչ, սարքեր, առաջնորդվելով համապատասխան մարմինների եզրակացություններով,
- օդափոխման և օդի լավորակման համակարգերում աղմուկի խլացուցիչների կիրառում:

11.8 Արտակարգ իրավիճակներ.

Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- կառույցների հիմքերի փոստրակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ պարտադիր է ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի զննումը և համապատասխան մասնագետի (երկրաբան) կողմից կազմված եզրակացությունը,
- կտեղադրվեն տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է շենքի նախագծողի, կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն
- շինհրապարակը կկազմակերպվի հակահրդեհային անվտանգության պաշտպանության կանոններին համապատասխան, կտեղադրվի ջրի բաք՝ հրդեհամարման նպատակով,
- տարածքն ապահովել մուտքի, ելքի ճանապարհներով, ինչպես ավտոմեքենաների, այնպես էլ հրդեհային իրավիճակների համար,
- շինհրապարակն ապահովել հակահրդեհային վահանակով, հակահրդեհային կրակմարիչներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով,
- շինհրապարակն, ինչպես նաև բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունները ժամանակ առ ժամանակ մաքրել հրդեհավտանգ և պայթուցանավտանգ թափոններից և աղբից,
- հակահրդեհային միջտարածությունները չօգտագործել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,
- բաց պահել նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները, տեղադրել դրանց մոտեցման համապատասխան ցուցանակներ,
- տեղադրել ձայնային ազդանշաններ, հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ՝ վթարների կանխարգելման համար,
- հեղուկ և վտանգավոր նյութերը պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են:

Շահագործման փուլ.

- շենքին կից կառուցվելու է 206մ² ընդհանուր մակերեսով 1 ստորգետնյա հարկ, որը արտակարգ իրավիճակներում բնակչության համար օգտագործվելու է որպես պարզագույն թաքստոց: Թաքստոցն ապահովված է լինելու համապատասխան կահավորանքով, վթարային ելքերով,
- պահպանել հակահրդեհային մուտքերը՝ հրշեջ մեքենաների շրջադարձի համար,
- դռները լինելու են հակահրդեհային՝ ինքնափակվող:

11.9 Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը.

(Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն), սոցիալական գործոնները.

Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,

-պահպանել շինհրապարակում՝ անվտանգության տեխնիկայի կանոններն, անցումները, վտանգավոր զոնանները ցանկապատել,

- ապահովվել աշխատողների անվտանգությունը բարձրության վրա,

- մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների,

- բանվորական խմբերը լինելու են բազմապրոֆիլ և մասնագիտացված, անցկացվելու են ուսուցման և հրահանգավորման դասընթացներ,

- ստուգել և ատեստավորել առասանիչ բանվորների գիտելիքները, տեղադրել առասանման եղանակների և ձևերի նկարագրությամբ ցուցանակներ,

- աշխատողների համար ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական և պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ, կոշիկ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով,

- աշխատողներին ապահովել սանիտարական և հանգստի պայմաններով (հանգստի սենյակ, հանդերձարան և այլն)՝ անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն),

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ,

- շինարարական թափոններ և շինանյութ տեղափոխող մեքենաների համար սահմանել ժամանակացույց և ընտրել հատուկ երթուղիներ՝ ընդհանուր երթևեկին չխոչընդոտելու և ճանապարհների ծանրաբեռնվածությունից խուսափելու նպատակով:

- վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառել գործնետության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները,

- վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները,

- նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն, ընդհանուր երթևեկության խոչընդոտումը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,

- բացառել ավտոամբարձիչի սլաքի աշխատանքը՝ սահմանազատված սահմանից դուրս,

- բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին, երթևեկության արագությունը շինհրապարակում չպետք է գերազանցի 5կմ/ժ,

- շինհրապարակի լուսավորությունը ապահովել հավասարաչափ՝ լուսավորության 2 լյուքսից ոչ պակաս, անհրաժեշտության դեպքում տեղադրել լրացուցիչ լուսավորման սարքեր,

- շենքի ներսում եռակցման և ներկման աշխատանքները կատարել օդափոխության պայմաններում, հոսանքատար մասերի մեկուսացում,

- վարել տեխնիկական հսկողության ամփոփիչ և անհատական մատյաններ՝ տեխնիկական վերահսկողության իրականացման համար:

Շինարարության ամբողջ ընթացքում ապահովել մարդկանց կյանքի և առողջության ապահովման պայմանները, ջրի և սննդամթերքի որակի պահանջվող նորմերը, բժշկական միջոցների բավարար քանակը, դրանց տեղափոխման հիգիենիկ պայմաններն ու անվտանգությունը:

Շահագործման փուլ.

Շահագործման փուլում ԱԲ կենտրոնն ապահովված է լինելու հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմաններով՝ ՀՀՇՆ 1/-11.07.01-2006 շինարարական նորմերին համապատասխան:

Մասնավորապես նախատեսվում է.

- համալիրն ապահովված է լինելու հաշմանդամների պահանջներին հարմարեցվող ունիվերսալ, շարժական տարրերով,

- վերգետնյա և ստորգետնյա անցումներ, թեքահարթակներ,

- տարածքի մուտքը կահավորվել տարածքի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով:

Սոցիալական գործոններ. Շինարարության փուլում հնարավոր սոցիալական խնդիրներից խուսափելու համար նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները կատարել սահմանված ժամերին՝ ցերեկը,

- շինարարական աշխատանքները կատարել հերթափոխային գրաֆիկով,

- բացառել շինտեխնիկայի, տրանսպորտային միջոցների տեղեշարժի կուտակումները ճանապարհային հատվածներում,

- շինտեխնիկայի օգտագործումից առաջացած ճանապարհի վնասված հատվածների վերանորոգում՝ բնակչության և տրանսպորտի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով,

-բացառել շինհրապարակից դուրս կենցաղային աղբի, թսփոնների, մեքենաների կուտակումները,

- գործելու է բողոքների արձագանքման ընթացակարգը:

11.10 Լանդշաֆտ.

Լանդշաֆտի պահպանման համար նախատեսվում է.

- բացառել նախատեսվող տարածքից դուրս կառուցապատման այլ աշխատանքները,
- պահպանել կառուցապատման նախագծային լուծումները, բացառելով տարածքից դուրս լրացուցիչ տարածքների օգտագործումը,
- հնարավորինս վերականգնել տարածքի լանդշաֆտը, մաքրել թափոններից:

11.12 Բարեկարգում և Կանաչապատում.

Բարեկարգման և կանաչապատման նպատակով նախատեսվում է.

- կառուցապատումից ազատ տարածքի հարթեցում և բարեկարգում,
- տարածքի ազատ հատվածներում տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով մոտ 210 հատ ծառերի տնկում, սիզամարգերով պատում,
- կանաչ զանգվածի ոռոգում՝ բուսականության աճը և կայունությանն ապահովելու նպատակով,
- նորատունկ բուսականության, ծառերի չկայելու դեպքում նոր ծառատեսակներով փոխարինում:

Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է մաքրման կայանից դուրս եկող հոսքաջրերի, կուտակված անձրևաջրերի հաշվին:

12. Նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման ծրագիրը (Մոնիթորինգ).

